օտար ◆◆◆ գիր

Դենիել Քիզ

Ծաղիկներ էլջերնոնի համար

Երևան
«Անտարես»

ՀՏԴ 821.111(73)-31 Քիզ
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44
Ք 531

Daniel Keyes
Flowers for Algernon

Անգլերենից թարգմանեց
ՀԱՅԿ ՖԵԼԵՔՅԱՆԸ

Դենիել Քիզ
Ք 531 Ծաղիկներ Էլջերնոնի համար: Վեպ/ Քիզ Դենիել, անգլերենից թարգմանեց Հայկ Ֆելեքյանը. – Եր.: Անտարես, 2016.– 100 էջ:

«Ծաղիկներ Էլջերնոնի համար» վեպը նախապես գրվել է իբրև պատմվածք 1959 թվականին և արժանացել «Հյուգո» մրցանակի՝ որպես լավագույն պատմվածք: 7 տարի անց Քիզն այն վերածեց վեպի: Ժանրային այս փոխակերպումն ընդհանրական առումով չի փոխել ստեղծագործության էությունը, բայց անգրագետից հանճար և հանճարից անգրագետ գիտափորձը վիպական տարածության մեջ է՛լ ավելի տպավորիչ է իր մանրամասներով:

ISBN 978-9939-76-002-5

Copyright©1966,1959 by Daniel Keyes
Copyright renewed 1994, 1987 by Daniel Keyes
© «Անտարես», 2016
© Ֆելեքյան Հ., 2016

79

հաշվետվություն 1 - մարտի 5, 1965

Դոկտոր Շտրաուսը ասում է որ ես պիտի գրեմ ինչեմ մտածում ու ամեն ինչ որ իմ հետ լինում է սրանից հետո: Ես չգիտեմ ինչու բայց ինքն ասում է որ դա շատ կարեվոր է որ իրենք հասկանան ինձ օգտագործելու են թե ոչ: Ես հույս ունեմ որ ինձ կոգտագործեն: Միսս Կինիաննն ասում է որ նրանք երեվի կկարողանան ինձ խելացի դարցնել: Ես ուզումեմ խելացի լինել: Իմ անունը Չարլի Գորդոն է: Ես 37 տարեկանեմ ու 2 շափաթ առաջ իմ ծնունդն էր: Հիմա ես էլ գրելու բան չունեմ դրա համար էլ էսոր վերջացնումեմ գրելը:

հաշվետվություն 2 - մարտի 6

Ես էսոր տեստ արեցի: Ինձ թվում է կտրվելեմ: Ու ինձ թվում է որ հիմա իրենք հազիվ թե ինձ օգտագործեն: Տեստը էն էր որ մի բարի ջահել մարդ կար սենիակում ու լիքը սպիտակ քարտեր ուներ ու վրաները լրիվ թանաք էր թափված: Ինձ ասեց Չարլի ինչես տեսնում քարտերի վրա: Ես ահավոր վախեցած էի չնայած նապաստակի ոտքս գրպանումս էր որովհետեվ երբ փոքր էի դպրոցում միշտ կտրվում էի տեստերից ու եսել էի թանաք թափում:

Ես ասեցի որ թանաքի բիծեմ տեսնում: Ինքը ասեց այո ու ես ինձ լավ զգացի: Ինձ թվաց որ վերջ բայց հենց վերկացա որ գնամ ինքը ինձ կանգնեցրեց: Ասեց մի քիչ էլ նստիր Չարլի մենք դեռ չենք վերչացրել: Հետո արդեն այդքան էլ լավ չեմ հիշում բայց ինքը ուզում էր որ

ասեմ ինչ կա թանաքի մեջ: Ես ոչմի բան չտեսա թանաքի մեջ բայց ինքը ասեց որ նկարներ կան ու ուրիշ մարդիկ ինչոր նկարներ են տեսնում: Ես ոչմի նկար չկարողացա տեսնել: Բայց իսկականից շատ փորցեցի: Քարտը շատ մոտիկ էլ պահեցի շատ հեռու էլ: Հետո ասեցի որ եթե ակնոցս դրած լինեի երեվի ավելի լավ կտեսնեի ես ակնոց սովորաբար մենակ կինո կամ հեռուստացույց նայելուց եմ դնում բայց հետո ասեցի որ միջանցքում պահարանի մեջ է: Ակնոցս բերեցին: Հետո ես ասեցի դե տուր նորից նայեմ էդ քարտտ ու էս անքամ հաստատ կգտնեմ թանաքի մեջ ինչ կա:

Ես շատ փորցեցի բայց մեկ է չկարողացա նկարները գտնել ու մենակ թանաք էի տեսնում: Ասեցի նրան որ երեվի ինձ նոր ակնոց է պետք: Ինքը թղթի վրա ինչոր բան գրեց ու ես վախեցա որ տեստից կտրվելեմ: Ասեցի որ էդ շատ սիրուն թանաքի բիծ էր ու եզրերի չորսկոմը լիքը փոքրիկ կետիկներ կային: Ինքը շատ տխուր տեսք ուներ ուրեմն ես սխալ

էի ասել: Ասեցի խնդրումեմ թողեք մի անքամ էլ փորցեմ: Մի քանի րոպե որ թողնեք կկարողանամ նկարը գտնել որովհետեվ մեկմեկ ես մի քիչ դանդաղեմ մտածում: Ես համել դանդաղեմ կարթում միսս Կինիանի դասարանում հետամնաց չափահասների համար բայց ես շատեմ աշխատում իմ վրա ու ուզումեմ արագ կարթալ:

Ինքը ինձ թողեց որ մի ուրիշ քարտի էլ նայեմ որի վրա երկու տեսակ թանաք էր թափված կարմիր ու կապույտ:

Ինքը շատ բարի էր ու հետս դանդաղ էր խոսում ոնցոր միսս Կինիանը ու բացատրեց որ դա *ռեխ շապ* տեստ է: Ասեց մարդիկ թանաքի մեչ բաներ են տեսնում: Ես ասեցի ցույց տուր որտեղ: Ինքը ասեց մտածի: Ես ասեցի որ թանաքի բիծ եմ մտածում բայց երեվի դա էլ ճիշտ չեր: Ինքը ասեց իսկ դա քեզ ինչ է հիշացնում մի բան պատկերացրու: Ես աչքերս երկար փակած պահեցի որ պատկերացնեմ: Ասեցի որ պատկերացնումեմ փչացած գրիչ ու սփռոցի վրա թափված

թանաք: Դրանից հետո ինքը վերկացավ ու դուրս գնաց:

Ինձ թվում է ես *ռեխ շատ* տեստից կտրվելեմ:

հաշվեկշիռ 3 - մարտի 7

Դոկտոր Շտրաուսն ու դոկտոր Նեմուրը ասում են որ թանաքի բծերը կարեվոր չեն: Ես ասեցի որ քարտերի վրա ես չեի թանաքը թափել ու որ թանաքի մեջ ոչմի բան չկարողացա տեսնել: Իրենք ասեցին որ երեվի դեռ կոգտագործեն ինձ: Ես ասեցի որ միսս Կինիանը ինձ երբեք այդպիսի տեստեր չեր տալիս մենակ ուղղագրուցյուն ու ընթերցանուցյուն էր ստուգում: Իրենք ասացին որ միսս Կինիանը պատմել է որ ես իր ամենալավ աշակերտն եմ հետամնաց չափահասների գիշերոտիկ դպրոցում որովհետեվ ես ամենաշատն եմ աշխատում ու իսկականից ուզումեմ սովորեմ: Հետո ասեցին Չարլի բա ոնց եղավ որ դու ինքնուրույն գնացիր չափահասների գիշերոտիկ դպրոց: Ոնց գտար: Ես ասեցի որ հարցրեցի մարդկանց ու մեկը բացատրեց ես ուր գնամ որ լավ կարթալ գրել

սովորեմ: Իրենք ասեցին իսկ ինչու էիր ուզում դպրոց գնալ: Ես ասեցի որ ամբողջ կյանքումս ուզելեմ խելացի լինել ոչ թե հիմար: Բայց խելացի լինելը շատ դժվար բան է: Իրենք ասեցին գիտես չէ որ դա երեվի ժամանակաոր է լինելու: Ես ասեցի այո: Միսս Կինիանը ինձ արդեն ասել է: Ոչինչ թող մի քիչ էլ ցավա ես չեմ վախենում:

Հետո էսոր էլի ուրիշ խառը տեստեր էլ ունեցա: Տեստը մի հաճելի կին էր անցկացնում ու ինձ ասեց դրա անունը ու ես հարցրեցի թե ոնց է գրվում որ կարողանամ իմ հաշվետվուցյան մեջ գրեմ: ԹԵՄԱՏԻԿ ԸՆԿԱԼՄԱՆ ՏԵՍՏ: Ես առաջին երկու բառերը չեմ հասկանում բայց գիտեմ տեստը ինչ է նշանակում: Տեստը այն է որ կամ անցնումես կամ էլ վատ գնահատականներ ես ստանում: Այս մի տեստը սկզբում ավելի հեշտ թվաց որովհետեվ նկարները տեսնում էի: Բայց այս անքամ ինքը չեր ուզում որ ես ասեմ ինչ նկար եմ տեսնում: Ես շփոթվեցի: Ասեցի որ երեկվա մարդը ասում էր որ պետք է ասեմ ինչեմ տեսնում թանաքի մեջ իսկ կինը ասեց որ

դա կապ չունի: Ասեց պատմիր նկարների մեջի մարդկանց մասին:

Ես ասեցի ոնց կարողեմ պատմել այն մարդկանց մասին ում կյանքում չեմ տեսել: Ասեցի ինչու պիտի ստեր հորինեմ: Ես էլ երբեք սուտ չեմ խոսում որովհետև ամեն անքամ բռնվումեմ:

Ինքը ասեց այս տեստն ու մյուսը ռեխ-շատը անձայն հատկանիշները պարզելու համար են: Ես քիչ էր մնում ծիծաղից մեռնեի: Ասեցի ոնց կարող եք թանաքի բծերից ու նկարներից այդպիսի բան պարզել: Ինքը տխրեց ու նկարները պահեց: Ինձ մեկ է: Այդ ամեն ինչը հիմարություն է: Ինձ թվում է ես այդ մի տեստից էլ եմ կտրվել:

Հետո սպիտակ խալաթներով մարդիկ ինձ տարան հիվանդանոցում մի ուրիշ տեղ ու խաղ տվեցին որ խաղամ: Խաղը մի տեսակ մրցություն էր սպիտակ մկնիկի հետ:

Մկնիկի անունը Էլջերնոն է: Էլջերնոնը մի արկղի մեջ էր որտեղ լիքը ծուռումուռ ճամփաներ ու անկյուններ կային ոնցոր ասենք շատ խառը պատեր ու ինձ էլ մատիտ տվեցին ու

թուղթ որի վրա լիքը գծեր ու քառակուսիներ կային: Մի կողմում գրված էր ՍԿԻԶԲ մյուս կողմում ՎԵՐԶ: Ինձ ասեցին որ դա *լաբինթոս* է ու որ իմ ու Էլջերնոնի *լաբինթոսները* նույնն են: Ես չհասկացա ոնց կարող են մեր *լաբինթոսները* նույնը լինել եթե Էլջերնոնինը արկղ է իսկ իմը թուղթ բայց ոչմի բան չասեցի: Մեկ է ժամանակ չկար որովհետեվ մրցուցյունը արդեն սկսվել էր:

Մարդկանցից մեկը ժամացույց ուներ ու փորցում էր պահել որ ես չտեսնեմ դրա համար էլ ես աշխատում էի այդ կողմ չնայել ու դրա պատճառով անընթատ նյարդայինանում էի:

Ես այդ տեստից ավելի շատ նեղվեցի քան մնացած բոլորից որովհետեվ իրենք դա անցկացրեցին տասը անքամ ամեն անքամ ուրիշ *լաբինթոսով* ու բոլոր անքամները Էլջերնոնը հաղթեց: Ես չգիտեի որ մկները այդքան խելացի են: Երեվի Էլջերնոնը սպիտակ մկնիկ է դրանից է: Երեվի սպիտակ մկները ավելի խելացի են քան մյուսները:

հաշվեկշիռ 4 - մարտի 8

Ինձ օգտագործելու՛ են: Էնքան վոգեվորվածեմ որ հազիվեմ կարողանում գրեմ: Դոկտոր Նեմուրն ու դոկտոր Շտրաուսը սկզբում այդ մասին մի քիչ վիճեցին իրար հետ: Դոկտոր Նեմուրը այնքան էլ չեր ուզում ինձ օգտագործեր բայց դոկտոր Շտրաուսը ասեց որ միսս Կինիանը խորուրդ է տվել ինձ վերցնել ու որ ես իր ամենալավ աշակերտն եմ: Միսս Կինիանը ինձ դուր է գալիս որովհետև ինքը շատ խելացի ուսուցչուի է: Ու նա ինձ ասեց Չարլի դու երկրորդ շանս կունենաս: Եթե կամաոր համաձայնես այս գիտափորցին մասնակցել հնարաոր է որ խելացի դառնաս: Իրենք դեռ չգիտեն մշտական կլինի թե ոչ բայց շանս կա: Դրա համար էլ ես ասեցի համաձայնեմ չնայած շատ էի վախեցած որովհետև միսս Կինիանը ասեց որ ինձ վիրահատուցյուն են անելու: Հետո ինքը ասեց

մի վախեցի Չարլի դու այդքան քիչ բան ունենալով այնքան շատ բանես կարողացել անել որ ինձ թվում է դու ամենաշատն ես դրան արժանի:

Դրա համար էլ վախեցա երբ դոկտոր Նեմուրն ու դոկտոր Շտրաուսը սկսեցին կռվել:

Դոկտոր Շտրաուսն ասեց որ իմ մեջ ինչոր մի շատ լավ բան կա: Ասեց որ ես լավ *մոտիկացիա* ունեմ: Ես կյանքում չգիտեի որ այդպիսի բան ունեմ: Ես ինձ հպարտ զգացի երբ ասեց որ 68 վայքու ունեցող ամեն մեկը չի որ կարող է դա ունենալ: Ես չգիտեմ թե դա ինչ է կամ որտեղիցեմ գտել բայց ինքը ասեց որ Էլջերնոնն էլ դրանից ունի: Էլջերնոնի *մոտիկացիան* իր արկղի մեջ դրված պանիրն է: Բայց իմը հաստատ ուրիշ բան է որովհետեվ ես էս շափաթ պանիր ընդհանրապես չեմ կերել:

Հետո ինքը ինչոր բան ասեց դոկտոր Նեմուրին որ ես չհասկացա դրա համար էլ մինչեվ իրենք խոսում էին ես միքանի բառ գրեցի որ հիշեմ:

Ասեց դոկտոր Նեմուր ես գիտեմ որ Չարլին հաստատ այն չի ինչ պատկերացնում էիք որ կլինի ձեր առաջին իմտելեկ*** (չկարողացա գրել) սուպերմենը: Բայց իր նման ցածր բանակա*** ունեցող մարդկանց մեծ մասը թշնա*** են տրամադրված լինում ու չեն համագործ*** իրենք սովորաբար համառեն ու ապաթ*** ու իրենց հետ շատ դժվար է աշխատելը: Իսկ ինքը լավ բնավորություն ունի հետարքրված է ու պատրաստակամ:

Դոկտոր Նեմուրը ասեց հիշեք որ ինքը առաջին մարդկայն արարածն է լինելու ում իմտելեկտը վիրահատական միջամտության արձյունքում եռապատկվելու է:

Դոկտոր Շտրաուսը ասեց ճիշտ է: Տեսեք թե ինքը իր ցածր մտաոր տարիքի համար ինչքան լավ է կարթալ ու գրել սովորել դա նույնքան լուրջ ձերքբեր*** է ինչքան եթե ես ու դուք առանց որեվե օգնության սովորեինք էնշտեյնի ***կանության տեսությունը: Դա հենց շատ մեծ մոտիկացիայի նշան է: Ինքը ահռե*** մեծ կամք ու ցանկություն ունի ու

ես համոզված եմ որ պետք է օգտագործենք Չարլիին:

Ես լիքը բառեր չէի հասկանում ու համել իրենք շատ արագ էին խոսում բայց ոնցոր թե դոկտոր Շտրաուսը իմ կողմից էր իսկ մյուսը չէ:

Հետո դոկտոր Նեմուրը գլխով արեց ու ասեց լավ գուցե դուք ճիշտեք: Արի օգտագործենք Չարլիին: Երբ այդպես ասեց ես այնքան շատ ուրախացա որ տեղիցս վեր թռա ու ձեռքը սեղմեցի որ իմ նկատմամփ այդքան բարի է: Ասեցի շնորհակալուցյուն բժիշկ դուք չեք փոշմանի որ ինձ երկրորդ շանս եք տալիս: Ու ես անկեղծ համոզված եմ որ չեն փոշմանի: Վիրահատուցյունից հետո ես փորցելու եմ խելացի լինել: Փորցելու եմ ինչքան ուժ ունեմ:

հաշվեփվություն 5 - մարտի 10

Ես վախենումեմ: Այստեղ աշխատող լիքը մարդիկ բուշքոյրերն էլ ու ինձ տեստ տվողներն էլ եկան ու ինձ շոկոլադ բերեցին ու հաջողություն մախթեցին: Ես հույս ունեմ որ բախտս կբերի ու հաջողություն կունենամ: Նապաստակի ոտքը մոտս է բախտավոր պեննին էլ ու համել պայտս: Մենակ թե երբ հիվանդանոց էի գալիս դեմովս սեվ կատու անցավ: Դոկտոր Շտրաուսն ասում է Չարլի սնավատ մի եղիր սա գիտություն է: Բայց ես ամեն դեպքում նապաստակի ոտքս մոտսեմ պահում:

Ես դոկտոր Շտրաուսին հարցրեցի իսկ վիրահատությունից հետո Էլջերնոնին կհաղթե՞մ ու ինքը ասեց երեվի: Եթե վիրահատությունը ստացվի ես էդ մկնիկին ցույց կտամ որ կարողեմ այնքան խելացի լինել ինչքան ինքը: Երեվի

նույնիսկ ավելի խելացի: Ու հետո ես կկարողանամ ավելի լավ կարթամ ճիշտ գրեմ լիքը բան իմանամ ու մյուս մարդկանց նման լինեմ: Ես ուզումեմ մյուս մարդկաց նման խելացի լինեմ: Եթե պարզվի որ մշտական է իրենք ուզումեն ամբողջ աշխարում բոլորին խելացի դարցնել:

Այս առավոտ ինձ ուտելու ոչմի բան չտվեցին: Ես չեմ հասկանում ուտելը ինչ կապ ունի խելացի դառնալու հետ: Ես շատ սոված եմ ու դոկտոր Նեմուրն էլ շոկոլադներս տարավ: Այդ դոկտոր Նեմուրը լրիվ խոզ է: Դոկտոր Շտրաուսն ասում է որ վիրահատությունից հետո շոկոլադներս կվերադարցնեն: Վիրահատությունից առաջ ուտել չի կարելի:

Հաշվետվություն 6 - մարտի 15

Վիրահատությունը հեչ չցավաց: Ես այդ ժամանակ քնած էի: Այսոր աչքերիս ու գլխիս վիրակապները հանեցին ու ես արդեն կարողեմ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ գրել: Դոկտոր Նեմուրը նայել էր իմ հին գրածները ու ասում է որ ես ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ բառը սխալեմ գրում ու բացատրեց թե ոնց են ճիշտ գրում: Ուզումեմ փորցեմ հիշեմ:

Ես ուղագրուցյունը շատ վատեմ հիշում: Դոկտոր Շտրաուսը ասում է որ լավ է որ գրումեմ իմ հետ եղած ամեն ինչի մասին բայց պիտի ավելի շատ պատմեմ թե ինչեմ զգում ու ինչեմ մտածում: Երբ ասեցի որ չգիտեմ ոնց են մտածում ինքը ասաց ոչինչ փորցիր: Երբ վիրակապները աչքերիս վրա էին ես անընթատ փորցում էի մտածել: Ոչմի բան

չստացվեց: Ես չգիտեմ ինչի մասին մտածեմ: Երևվի եթե իրեն հարցնեմ ինքը կասի ոնց մտածեմ: Հիմա պիտի որ արդեն կամաց կամաց սկսեմ խելացի դառնալ: Հետարքրիր է ինչ են մտածում խելացի մարդիկ: Ինձ թվում է, շատ սիրուն բաներ: Ես էլ կուզենայի սիրուն բաներ իմանալ:

Հաշվետվություն 7 - մարտի 19

Ոչմի բան չի փոխվել: Ես էլի լիքը տարբեր տեստեր արեցի ու լիքը մրցեցի Էլջերնոնի հետ: Ատումեմ այդ մկնիկին: Ամեն անքամ հաղթում է ինձ: Դոկոր Շտրաուսն ասում է որ այդ խաղերը խաղալը կարեվոր է: Ու համել ասում է որ պիտի պարբենաբար նորից հանձնեմ նույն տեստերը: Թանաքի բծերը ապուշուցյուն են: Նկարներն էլ են ապուշուցյուն: Ես սիրումեմ տղա ու ախչիկ նկարել բայց ոչմի դեպքում ստեր չեմ հորինի մարդկանց մասին:

Այնքան շատեմ փորցում մտածել որ գլուխս ցավում է: Ինձ թվում էր որ դոկտոր Շտրաուսը իմ ընկերն է բայց ինքը ինձ չի օգնում: Չի ասում ինչ մտածեմ կամ երբ խելացի կդառնամ: Միսս Կինիանն էլ չի գալիս ինձ տեսնելու: Ինձ թվում է այս հաշվետվություններն էլ են ապուշուցյուն:

Հաշվեկշիռ 8 - մարտի 23

Ես հետ եմ գնում գործարան աշխատելու: Ինձ ասեցին որ ավելի լավ կլինի եթե նորից գնամ գործի բայց ոչմեկի չի կարելի ասել թե վիրահատությունը ինչի համար էր ու համել ամեն օր գործից հետո պիտի մի ժամով գամ հիվանդանոց: Իրենք ինձ ամեն ամիս փող են տալու որ ես սովորեմ խելացի լինել:

Ես ուրախեմ որ նորից գործի եմ գնում որովհետև շատեմ կարոտել իմ աշխատանքը ու իմ բոլոր ընկերներիս ու թե ինչքան լավ ենք ուրախանում մենք իրար հետ:

Դոկտոր Շտրաուսը ասում է որ ես պիտի շարունակեմ գրել բայց արդեն ամեն օր պետք չի մենակ երբ ինչոր բան եմ մտածում կամ ինչոր կարեվոր բան է լինում: Ինձ ասում է մի հուսատվիր որովհետև դրա համար ժամանակ է պետք ու դանդաղ է լինում: Ասեց որ Էլջերնոնն

էլ շատ ուշ դարցավ երեք անքամ ավելի խելացի քան առաչ էր: Ուրեմն Էլջերնոնը ինձ միշտ հաղթում է որովհետեվ իրեն էլ են նույն վիրահատուցյունից արել: Ես հիմա ինձ մի քիչ ավելի լավեմ զգում: Ինձ թվում է որ եթե սովորական մուկ լիներ ես կկարողանայ այդ *լաբինթոսը* իրենից արագ անցնել: Կարող է նույնիսկ մի օր հաղթեմ Էլջերնոնին: Երեվի ուրախուցյունից կգժվեմ: Մինչեվ հիմա ամեն ինչ ցույց է տալիս որ Էլջերնոնը ոնցոր թե մշտական խելացի է մնալու:

Մարտի 25 - (Հիմա արդեն պետք չի վերեվում անընթատ գրել ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ուղակի շափաթը մի անքամ երբ բոլորը միանքամից հանձնումեմ դոկտոր Նեմուրին: Ուղակի պիտի ամսաթիվ գրեմ: Լավ է ժամանակեմ խնայում):

Այսոր գործարանում կարքին ուրախացանք: Ջո Կարպը ասեց հլը նայեք Չարլիի ինչն են վիրահատել Չարլի բա ինչ են արել չլնի մի քիչ ուղեղ են ավելացրել գլխիտ մեչ: Արդեն քիչ

էր մնում ասեյ բայց հետո հիշեցի որ դոկտոր Շտրաուսը ասել էր որ չի կարելի: Հետո Ֆրենկ Ռեֆլին ասեց հաստատ բանալիներտ մոռացել էիր մի տեղ ու ստիպված դուռը էտ հաստ գլխովտ ես բացել: Ես շատ ծիծաղեցի: Իրենք իմ իսկական ընկերներն են ու սիրում են ինձ:

Մեկմեկ ինչոր մեկը ասում է հլը նաիր Ջոն կամ Ֆրենկը կամ Ջորջը իրեն լրիվ Չարլի Գորդոնի տեղն է դրել: Ես չգիտեմ թե ինչու են այդպես ասում բայց հետո միշտ ծիծաղում են: Այս առավոտ Ամոս Բորգը որ Դոնեգանսի գործարանում չորորդ մարդն է գոռում էր առաքիչ Էռնիի վրա ու իմ անունն էր տալիս: Էռնին փաթեթ էր կորցրել: Ասում էր գրողը քեզ տանի Էռնի կարող է գիտես Չարլի Գորդոն ես: Ես չհասկացա թե ինչու այդպես ասեց: Ես երբեք ոչմի փաթեթ չեմ կորցրել:

Մարտի 28 – Այսոր դոկտոր Շտրաուսը եկավ իմ սենյակ որ տեսնի թե ինչու գործից հետո իր մոտ չեմ գնացել: Ես ասեցի որ էլ չեմ ուզում

Էլջերնոնի հետ մրցել: Ինքը ասեց որ միվորոշ ժամանակ դեռ կարող եմ չմրցել բայց ամեն դեպքում պիտի գնամ: Ու համել ինձ նվեր էր բերել բայց ոչթե իսկական նվեր այլ ուղակի թողնում էր որ մնա մոտս: Սկզբում ինձ թվաց փոքրիկ հեռուստացույց է բայց չէ ուրիշ բան էր: Ասեց որ երբ պարկում եմ քնելու պիտի միացնեմ: Ես ասեցի ձեռ եք առնում ինչու պիտի միացնեմ եթե պարկում եմ քնելու: Ով է այդպիսի բան լսել: Բայց ինքը ասեց որ եթե ուզումեմ խելացի դառնամ պիտի անեմ ինչ ասում է: Ես ասեցի որ չեմ կարծում որ խելացի կդառնամ ու ինքը ձեռքը դրեց ուսիս ու ասեց Չարլի դու դեռ չգիտես բայց դու հիմա ամեն վարկյան ավելի ու ավելի խելացի ես դառնում: Միվորոշ ժամանակ դու դա դեռ չես նկատի: Ինձ թվում է ինքը ուղակի ուզում էր ինձ հանգստացնել որովհետեվ ես ինձ հեչ խելացի չեմ զգում:

Հա քիչ էր մնում մոռանայ: Հարցրեցի թե երբ կկարողանամ հետ գնալ միսս Կինիանի դասարան: Ինքը ասեց որ էլ չեմ գնալու դպրոց: Ասեց որ շուտով միսս Կինիանը ինքը

կսկսի հիվանդանոց գալ ու ինձ առանձին դաս կտա: Ես միսս Կինիանի վրա շատ էի ջղայնացած որ չեկավ ինձ տեսնի վիրահատությունից հետո բայց ես իրեն շատեմ սիրում ու ուզումեմ էլի ընկերանանք:

Մարտի 29 - Այդ ապուշ հեռուստացույցը ամբողջ գիշեր չթողեց քնեմ: Ոնց կարողեմ քնել երբ ամբողջ գիշեր ականջիս մեջ ապուշ բաներ են գոռում: Բա խելառ նկարները: Ուֆ: Ես նույնիսկ արթուն ժամանակ բան չեմ հասկանում ուր մնաց քնած ժամանակ հասկանամ:

Դոկտոր Շտրաուսը ասում է որ ամեն ինչ լավ է: Ասում է որ ուղեղս շարունակում է սովորել երբ ես քնածեմ ու դա ինձ շատ պետք կգա երբ միսս Կինիանը սկսի հիվանդանոցում ինձ դաս տալ (մենակ թե ես պարզել եմ որ դա ոչթե հիվանդանոց է այլ լաբատորիա): Ինձ թվում է այդ ամեն ինչը հիմարություն է: Եթե կարողես քնած ժամանակ խելոքանալ ուրեմն էլ ինչու են մարդիկ դպրոց գնում: Ես չեմ

կարծում որ մի բան կստացվի: Առաչ ես միշտ նայում էի ուշ երեկոի ու գիշերվա բոլոր շոու-ները բայց դրանից ոչմի կաթիլ ավելի խելացի չեմ դարցել: Երեվի պիտի նայելու ժամանակ քնած լինես:

Հաշվետվություն 9

Ապրիլի 3 - Դոկտոր Շտրաուսը ինձ ցույց տվեց թե ոնց հեռուստացույցի ձայնը իջեցնեմ ու հիմա գոնե կարողանումեմ քնել: Արդեն ոչմի բան չեմ լսում: Բայց մեկ է չեմ հասկանում ինչ է ասում: Մեկմեկ առավոտն էլ եմ միացնում որ իմանամ քնած ժամանակ ինչեմ սովորել ու ինձ թվում է ոչմի բան էլ չեմ սովորել: Միսս Կինիանն ասում է որ կարող է դա ինչոր ուրիշ լեզու է կամ ուրիշ եսիմինչ: Բայց հիմնականում ոնցոր ամերիկերեն լինի: Այնքան արագ է խոսում որ էլ չասած նույնիսկ ավելի արագ քան միսս Գոլդը: Ինքը իմ վեցերորդ դասարանի ուսուցչուին էր ու այնքան արագ էր խոսում որ բան չէի հասկանում:

Ես դոկտոր Շտրաուսին հարցրեցի ում է պետք քնի մեջ խելացի դառնալը: Ես արթուն ժամանակ եմ ուզում խելացի լինեմ: Ինքը ասեց

որ դրանք նույն բանն են ու որ ես երկու խելք ունեմ *ենթագիտակցություն* ու *գիտակցություն* (այսպես են ճիշտ գրվում)։ Ու մեկը մյուսին չի ասում թե ինքը ինչ է անում։ Նույնիսկ չեն էլ խոսում իրար հետ։ Դրա համար էլ երազներ եմ տեսնում։ Ու էս վերչերս ինչ գիշերը հեռուստացույցը միացրած եմ թողնում սկսել եմ ահավոր խառը երազներ տեսնել։ Հաստատ էդ ուշ ուշ ուշ ուշ ուշ գիշերվա շոուներից է։

Մոռացա հարցնեմ մենակ ես եմ թե բոլորն էլ երկու խելք ունեն։

(Մի քիչ առաչ նայեցի դոկտոր Շտրաուսի տված բառարանում *Ենթագիտակցություն, գ. Աղոտ՝ ոչ լիովին գիտակցված պատկերացումների՝ տրամադրությունների՝ զգացմունքների ևն տիրույթը*)։ Էլի կա գրած բայց մեկ է չեմ հասկանում թե ինչ է նշանակում։ Սա իմ նման հիմար մարդկանց համար այնքան էլ լավ բառարան չէ։

Գլուխս երեկվանից հետո դեռ ցավում է։ Գործարանի ընկերներս Ջո Կարպն ու Ֆրենք Ռեյլին ինձ հրավիրեցին Մագսիի սալուն իրար

հետ խմելու: Ես խմել չեմ սիրում բայց իրենք ասեցին արի արի տես ոնց ենք ուրախանալու: Ես լավ ժամանակ անցկացրեցի:

Ջո Կարպը ասեց որ ես պետք է ախչկերքին ցույց տամ թե ոնցեմ գործարանում զուքարան լվանում ու ինձ հատակի շոր տվեց: Ես ցույց տվեցի ու բոլորը շատ ծիծաղեցին երբ ասեցի որ միստր Դոնեգանը ասում է որ ես իր ունեցած ամենալավ հավաքարարնեմ որովհետեվ սիրումեմ իմ գործը լավեմ աշխատում ու երբեք չեմ ուշանում կամ օր չեմ բացթողնում բացի վիրահատուցյանս օրից:

Ես ասեցի որ միսս Կինիանը միշտ ասում է Չարլի հպարտ եղիր քո աշխատանքով որովհետեվ դու լավես աշխատում:

Բոլորը ծիծաղեցին ու մենք կարքին ուրախացանք ու հետո իրենք ինձ լիքը խմելու բան տվեցին ու Ջոն ասեց Չարլին էս ինչ դեմք է ճաքած ժամանակ: Չգիտեմ դա ինչ է նշանակում բայց բոլորը ինձ սիրում էին ու մենք ուրախ էինք: Արդեն չեմ համփերում ուզումեմ Չարլի Կարպի ու Ֆրենկ Ռեյլիի նման

խելացի դառնամ: Իրենք իմ ամենալավ ընկերներն են:

Լավ չեմ հիշում երեկոն ոնց վերչացավ բայց ոնցոր թե ես դուրս եկա որ Ջոի ու Ֆրենկի համար սուրճ ու թերթ առնեմ ու երբ հետ եկա արդեն բոլորը գնացել էին: Ես մինչեվ ուշ գիշեր ամեն տեղ նրանց էի ման գալիս: Հետո արդեն համայրա բան չեմ հիշում բայց ինձ թվում է մի տեսակ քունս տարավ կամ հիվանդացա: Ինչոր բարի ոստիկան ինձ տուն բերեց: Տանտիրուհիս միսիս Ֆլինն էր այսոր պատմում:

Բայց մեկ է գլուխս ուժեղ ցավում է ու վրան մեծ ուռած տեղ կա ու դեմքս լրիվ սեվ ու կապույտ է: Ինձ թվում է ընկելեմ բայց Ջո Կարպն ասում է որ ոստիկանի արածը կլինի դրանք մեկմեկ հարփեցողներին ծեծում են: Ես այդպես չեմ կարծում: Միսս Կինիանը ասում է որ ոստիկանները մարդկանց օգնելու համար են: Ինչոր է գլուխս ահավոր ցավում է ու ինձ վատեմ զգում ու ամբողչ մարմինս նվվում է: Էլ երփեք չեմ խմելու:

Ապրիլի 6 - Ես Էլջերնոնին հաղթեցի՛: Նույնիսկ չգիտեի էլ որ հաղթելեմ մինչեվ տեստը անցկացնող Բարտը ինձ չասեց: Հետո երկրորդ անքամ պարտվեցի որովհետեվ այնքան էի ոչեվորվել որ կեսից աթոռից ընկա: Բայց դրանից հետո էլի ութ անքամ հաղթեցի: Երեվի թե խելոքանումեմ եթե կարողանումեմ Էլջերնոնի նման խելացի մկնիկին հաղթել: Բայց ես ինձ խելացի չեմ *զգում*:

Ուզում էի մի քիչ էլ մրցեմ Էլջերնոնի հետ բայց Բարտը ասեց որ մի օրվա համար հերիք է: Հետո թողեցին որ մի քիչ իրեն բռնեմ: Ինքը այնքան էլ վատը չէր: Այնքան փափուկ էր ոնցոր բամբակի գունդ լիներ: Անընթատ թարթում էր ու երբ աչքերը բացում էր սեվ էին ու եզրերն էլ վարթագույն:

Ես հարցրեցի կարողեմ իրեն կերակրել որովհետեվ ինձ վատ էի զգում որ հաղթելեմ ու ուզում էի լավը լինեմ ու հետը ընկերանամ: Բարտը ասեց ոչ Էլջերնոնը շատ յուրատուկ մկնիկ է իրեն էլ են իմ վիրահատուցյունից արել ու ինքը բոլոր կենդանիներից առաչինն է ով այսքան

երկար խելացի է մնացել: Ասեց որ Էլջերնոնն այնքան խելացի է որ ամեն օր պետք է տեստ լուծի որ ուտելիք ստանա: Էդ ոնցոր մի տեսակ կոխպեք լինի ուտելիքի դռան վրա ու ամեն անքամ երբ Էլջերնոնը մտնում է այդտեղ կոխպեքը փոխած են լինում այսինքն ինքը ուտելու համար պիտի ամեն անքամ նոր բան սովորի: Ես դրանից տխրեցի որովհետև եթե չկարողանա սովորել սոված կմնա:

Ինձ թվում է չի կարելի ինչոր մեկին ստիպել որ ուտելու համար տեստ անցնի: Դոկտոր Նեմուրի դուրը չէր գա չէ եթե ամեն անքամ երբ ուտել ուզենար տեստ անցներ: Ինձ թվում է ես ու Էլջերնոնը իրար հետ կնկերանանք:

Ապրիլի 9 - Այսոր միսս Կինիանը գործից հետո եկել էր լաբորատորիա: Ինքը ոնց որ թե ուրախ էր ինձ տեսնելու համար բայց մի տեսակ վախեցած էր: Ես ասացի միսս Կինիան մի վախեցեք ես դեռ խելացի չեմ ու ինքը ծիծաղեց: Հետո ասաց Չարլի ես հավատում եմ որ դու

կկարողանաս ոնց էիր ամբողջ ուժով փորցում մնացած բոլորից լավ կարթալ ու գրել: Վատապույն դեքում գոնե մի որոշ ժամանակով կփոխվես ու նաև կօգնես գիտուցյանը:

Հիմա մի շատ դժվար գիրք ենք կարթում: Ես կյանքում այսքան դժվար գիրք չեմ կարթացել: Անունը *Ռոբինզոն Կրուզո* է ու մի մարդու մասին է ով ընկնում է անմարդաբնակ կղզի: Ինքը խելացի է ու հազարումի բաներ է հորինում որ տուն ու ուտելիք ունենա ու համ էլ լավ լողորդ է: Ուղակի մի տեսակ մեխքս գալիս է որովհետև լրիվ մենակ է ու ոչ մի ընկեր չունի: Բայց ինձ թվում է կղզու վրա էլի ինչոր մեկը կա որովհետև մի նկար կա որտեղ ինքը իր ծիծաղելի հովանոցը բռնած նայում է ինչոր ոտնահետքի: Ես հույս ունեմ որ ինքը ընկեր կճարի ու մենակ չի մնա:

Ապրիլի 10 - Միսս Կինիանը ինձ ուղագրություն է սովորեցնում: Ասում է նայիր բառին աչքերդ փակիր ու այնքան կրկնիր մինչև հիշես:

Ահավոր դժվար էր պառկելը որ պարկել ես ասում ու կրծելը որ կռծել ես ասում: Ես ոնց լսում էի այդպես էլ գրում էի քանի դեռ չեի սկսել խելոքանալ: Հիմա մի քիչ շփոթվածեմ բայց միսս Կինիանը ասում է վախենալու բան չկա ուղակի պետք է հիշել:

Հաշվետվություն 10

Ապրիլի 14 - Վերջացրեցի *Ռոբինզոն Կրուզոն*: Ուզումեմ իմանալ թե հետո ինչ է լինում իր հետ բայց միսս Կինիանն ասում է որ վերջ այդքանն է: *Ինչու*:

Ապրիլի 15 - Միսս Կինիանն ասում է որ ես արագեմ սովորում: Ինքը կարդաց իմ նախորդ հաշվետվություններից մի քանիսն ու մի տեսակ տարորինակ նայեց ինձ: Ասաց որ ես լավ մարդ եմ ու դեռ դրանց բոլորին ցույց կտամ: Ես հարցրեցի ինչու: Ինքն ասաց կարևոր չէ բայց չպետք է ինձ վատ զգամ եթե հասկանամ որ բոլորը այնքան բարի չեն ինչքան ինձ է թվում: Հետո ասաց աստված քեզ այդքան քիչ բան է տվել բայց դու ավելի շատ բանի ես հասել քան լիքը ուրիշ մարդիկ ովքեր չեն

էլ փորցում իրենց ունեցած ուղեղները օգտագործել: Ես ասացի որ իմ բոլոր ընկերները խելացի են բայց լավն են: Իրենք ինձ սիրում են ու երբեք չեն նեղացնում: Հետո նրա աչքի մեջ ինչոր բան ընկավ ու ինքը վազեց դուրս լվացվելու:

Ապրիլի 16 - Ես այսօր, սովորեցի, *ստորակետը*, սա ստորակետ է (,) պոչիկով, կետիկ, միսս Կինիանը, ասում է որ, ստորակետը կարևոր է, որովհետև, ավելի ճիշտ, է, դարցնում, գրածը, ասում է, որ ինչոր, մեկը, կարող է լիքը, փող կորցնել, եթե, ստորակետը, ճիշտ, տեղում, չդնի, ես փող, ընդհանրապես չունեմ, ու չեմ հասկանում, ոնց պիտի, ստորակետը, չթողնի որ փողերտ, կորցնես:

Բայց ինքն, ասում է որ, բոլորն էլ, ստորակետներ, դնում են, ուրեմն, ես էլ, կդնեմ:

Ապրիլի 17 - Ես ստորակետը սխալ էի օգտագործում: Դա կոչվում է կետադրություն: Միսս Կինիանը ասաց որ երկար բառերը բառարանով նայեմ որ սովորեմ դրանք ճիշտ գրել: Ես ասացի ինչ օգուտ եթե պիտի նայելով գրեմ: Ինքն ասաց ոչինչ դա քո կրթության մի մասն է ու դրա համար էլ հիմա բոլոր այն բառերը որ հաստատ չգիտեմ ոնց են գրվում բառարանով նայում եմ: Այդպես շատ դանդաղ եմ գրում բայց ինձ թվում է որ հետո հիշում եմ: Ընդամենը մի անգամ նայում եմ ու դրանից հետո արդեն միշտ ճիշտ եմ գրում: Դրա համար էլ *կետադրություն* բառը ճիշտ եմ գրել (բառարանում այդպես է գրված): Միսս Կինիանը ասում է որ վերջակետն էլ է կետադրություն ու որ դեռ լիքը ուրիշ սովորելու կետադրություններ կան:

Պետք է բոլոր նշաններն էլ օգտագործել ինքը. ինձ՛ ձևը, ցույց՞ տվեց» ու հիմա՛: գրելիս(կարողա՞նում... եմ ինչ տեսակ« կետադրություն ասե՛ս. օգտագոր՞ծել. Դեռ՞ լիքը՛ «օրենքներ, կան՛ որ) չգի-տեմ... բայց ես ամեն ինչ՝ շատ արագ-եմ սովորում:

Ամենաշատը՝ սիրո՞ւմ եմ, որ ինչ էլ հարցնեմ» Հարգելի միսս Կինիանին (գործնական նամակներում այդպես է պետք գրել եթե հանկարծ մի օր գործնական դառնամ) ինքը միշտ՝ ամեն ինչ բացատրում... է: Ինքը հանճա՛ր է: Ես երազո՛ւմ եմ որ իր» նմա՛ն խելացի, լինեմ:

(Ինչ, հավե՛ս բան է՝ կետադրությունը»):

Ապրիլի 18 - Բայց ի՞նչ բութ եմ ես: Փաստորեն՝ նույնիսկ չէի էլ հասկանում, թե միսս Կինիանը ինչ էր ասում: Անցած գիշեր քերականության դասագիրքը լրիվ կարդացի, ու այնտեղ ամեն ինչ շատ լավ բացատրած էր: Հետո հանկարծ տեսա, որ լրիվ նույն բանն էր, ինչ ինքն էր փորձում ինձ հասկացնել, բայց գլուխս չէր մտնում: Գիշերվա կեսին վեր կացա, ու գլխիս մեջ ամեն ինչ տեղն ընկավ:

Միսս Կինիանն ասում է, որ այդ ամենը քնածս ժամանակ աշխատող հեռուստացույցի շնորիվ է: Ասում է, որ պլատոյի եմ հասել: Պլատոն նույն բանն է, ինչ բլրի հարթ գագաթը:

Կետադրությունը հասկանալուց հետո նստեցի ու իմ բոլոր հին հաշվետվությունները սկզբից մինչև վերջ նորից կարդացի: Ո՞նց կարող էի այդքան ահավոր սխալներ անել մի ժամանակ, չեմ պատկերացնում: Միսս Կինիանին ասացի, որ ուզում եմ մի հատ նորից անցնել հին գրածներիս վրայով ու բոլոր սխալներս ուղղել, բայց ինքն ասաց. «Չէ, Չարլի, դոկտոր Նեմուրն ուզում է, որ ոնց կան, այդպես էլ մնան: Գիտե՞ս ինչու է պատժենելուց հետո բնորինակները վերադարձնում քեզ: Որ դու ինքդ տեսնես, թե ինչքան ես աճել: Դու շատ արագ փոխվում ես, Չարլի»:

Ես ինձ լավ զգացի: Դասից հետո իջա ներքև ու մի քիչ խաղացի Էլջերնոնի հետ: Մենք այլևս չենք մրցում:

Ապրիլի 20 – Ինձ ահավոր վատ եմ զգում: Ոչ թե վատ եմ զգում ու բժիշկ է պետք, այլ ոնց որ կրծքիս մեջ դատարկություն լինի, ու ինչ-որ բան ներսումս անընդհատ կծկվի ու վառվի:

Չէի ուզում այս մասին գրել, բայց կարծում եմ՝ գրել ամեն դեպքում պետք է, որովհետև կարևոր է: Այսօր առաջին անգամն էր, որ մնացի տանն ու գործի չգնացի:

Անցած գիշեր Զո Կարպն ու Ֆրենկ Ռեյլին ինձ էլի հրավիրել էին մի տեղ: Լիքը աղջիկներ կային ու մեր գործարանից էլ էլի մի քանի հոգի: Ես հիշեցի, թե անցած անգամ շատ խմելուց ոնց էի վատացել, ու Զոյին ասացի, որ խմել չեմ ուզում: Ինքը փոխարենը ինձ սովորական կոլա տվեց: Զգացի, որ մի տեսակ տարօրինակ համ ունի, բայց ինձ թվաց՝ դառնությունն ուղղակի բերանիս մեջ է:

Սկզբում լավ ուրախանում էինք: Զոն ասաց, որ ես պիտի պարեմ Էլենի հետ, ու որ Էլենն ինձ ձևերը ցույց կտա: Ես մի քանի անգամ ընկա ու չհասկացա, թե ինչու, որովհետև ինձնից ու Էլենից բացի ուրիշ ոչ ոք չէր պարում: Ու ամեն քայլի սայթաքում էի, որովհետև ինչ-որ մեկն անընդհատ ոտքը դեմ էր տալիս:

Հետո՝ հատակից վեր կենալիս, հանկարծ տեսա Զոի դեմքի արտահայտությունն ու

ներսումս ինչ-որ տարօրինակ բան զգացի: «Էս ինչ բոց էր», ասաց աղջիկներից մեկը: Ու բոլորը ծիծաղում էին:

«Վերջին անգամ էսքան շատ երևի Մագսիի մոտ էի ծիծաղել, երբ սրան գիշերվա կեսին ուղարկեցինք թերթ առնելու ու թռանք», ասաց Ֆրենկը:

«Հլը դեմքին նայեք: Ոնց որ բազուկ լինի»:

«Չէ հա՛, կարմրե՛լ է: Չարլին կարմրե՛լ է»:

«Էլեն, էդ ի՞նչ ես արել մեր Չարլիին: Առաջին անգամ եմ տեսնում, որ կարմրի»:

Չգիտեի՝ ինչ անեմ, ուր կորչեմ: Բոլորն ինձ էին նայում ու ծիծաղում էին, ու ես ինձ մերկ էի զգում: Սիրտս խառնում էր: Ուզում էի թաքնվել ինչ-որ տեղ: Դուրս վազեցի փողոց, այնտեղ չդիմացա ու հետ տվեցի: Հետո քայլեցի տուն: Ինչպե՞ս մինչև հիմա չէի նկատել, որ Ջոն, Ֆրենկն ու մյուսները սիրում էին ինձ իրենց հետ քարշ տալ, որովհետև ծիծաղում էին վրաս:

Հիմա արդեն գիտեմ, թե ինչ է նշանակում «իրեն Չարլի Գորդոնի տեղը դնել»:

Ամաչում եմ:

Հաշվետվություն 11

Ապրիլի 21 - Այսօր էլ գործարան չգնացի: Խնդրեցի, որ տանտիրուհիս՝ միսիս Ֆլինը, զանգի միստր Դոնեգանին ու ասի, որ հիվանդ եմ: Միսիս Ֆլինը վերջերս ինչ-որ շատ տարօրինակ է ինձ նայում, կարծես մի տեսակ վախենում է ինձնից:

Ինձ թվում է՝ լավ էր, որ իմացա, թե ինչպես էին բոլորը վրաս ծիծաղում: Հիմա անընդհատ այդ մասին եմ մտածում: Պատճառն այն է, որ ես այնքան հիմար եմ, որ նույնիսկ չեմ էլ հասկանում, թե ինչ հիմարություններ եմ անում: Մարդիկ կարծում են, որ շատ ծիծաղելի է, երբ հիմարը չի կարողանում նույն բաներն իրենց պես անել:

Ամեն դեպքում՝ հիմա հաստատ գիտեմ, որ օր օրի ավելի եմ խելոքանում: Արդեն կետադրական սխալներ չեմ անում ու կարողանում եմ ճիշտ գրել: Ինձ դուր է գալիս բարդ բառերը

բառարանում նայելն ու հիշելը: Հիմա շատ եմ կարդում, ու միսս Կինիանն ասում է, որ ես շատ արագ եմ կարդում: Երբեմն նույնիսկ հասկանում եմ, թե ինչ եմ կարդում, ու մտապահում եմ ամեն ինչ: Պատահում է, որ աչքերս փակում ու մտածում եմ ինչ-որ էջի մասին, ու դա նկարի նման հայտնվում է աչքիս առաջ:

Միսս Կինիանն ասում է, որ բացի պատմությունից, աշխարհագրությունից ու հանրահաշվից՝ պիտի սկսեմ օտար լեզուներ էլ սովորել: Դոկտոր Շտրաուսը մի երկու նոր ձայներիզ է տվել, որ քնած ժամանակ միացնեմ: Մինչև հիմա դեռ չեմ հասկանում, թե գիտակցությունն ու ենթագիտակցությունը ոնց են աշխատում, բայց դոկտոր Շտրաուսն ասում է, որ անհանգստանալու կարիք չկա: Ինձ խնդրեց, որ երբ մյուս շաբաթ սկսեմ քոլեջի դասընթացն անցնել, հոգեբանության մասին ոչ մի գիրք չկարդամ (քանի դեռ ինքը թույլ չի տվել):

Այսօր ինձ արդեն ահագին ավելի լավ եմ զգում, բայց կարծում եմ՝ դեռ մի քիչ ջղայնացած եմ, որ մարդիկ ինձ անընդհատ ձեռ էին առնում,

որովհետև այնքան էլ խելացի չէի: Երբ դոկտոր Շտրաուսի ասածի չափ խելոքանամ, ու իմ IQ 68-ը երեք անգամ ավելանա, ո՞վ գիտի, գուցե կդառնամ բոլորի նման, ու մարդիկ ինձ կսիրեն ու հետս կընկերանան:

Ափսոս՝ հաստատ չգիտեմ՝ IQ-ն ինչ է: Դոկտոր Նեմուրն ասաց, որ դրանով չափում են քո մտավոր ունակությունների մակարդակը, ոնց որ, օրինակ, դեղատանը կշեռքով դեղ են կշռում: Բայց դոկտոր Շտրաուսը շատ կոպիտ հակաճառեց ու ասաց, որ IQ-ն հեչ էլ խելացիությունը չափելու համար չէ: Ասաց, որ IQ-ն ցույց է տալիս, թե դու ինչքան խելացի կարող ես դառնալ, ոնց որ չափող բաժակի վրայի գծերն ու թվերը: Բաժակը դեռ լցնել է պետք:

Հետո, երբ հարցրի Բարտին (ինքն ինձ խելացիության տեստեր է տալիս ու Էլջերնոնի հետ է աշխատում), Բարտն ասաց, որ նրանք երկուսն էլ սխալ են (ուղղակի խնդրեց խոստանալ, որ իրենց չեմ պատմի, թե ինչ է ասել): Բարտն ասաց, որ IQ-ն հազար ու մի տարբեր բաներ է չափում՝ ներառյալ արդեն սովորածդ բաների

մի մասը, ու որ, մեր մեջ ասած, էդ IQ-ն ընդհանրապես ոչ մի բանի պետք չէ:

Մի խոսքով՝ դեռ չգիտեմ, թե IQ-ն ինչ է, բացի նրանից, որ իմը շուտով 200-ից բարձր է լինելու: Չեմ ուզում ոչ մի բան ասել, բայց ամեն դեպքում՝ չեմ հասկանում. ո՞նց պիտի իմանան, թե ես դրանից *ինչքան* ունեմ, երբ նույնիսկ չգիտեն, թե դա *ինչ* է կամ *որտեղ* է:

Դոկտոր Նեմուրն ասում է, որ վաղը պիտի *Ռորշախի տեստ* անցնեմ: Հետաքրքիր է՝ դա ի՞նչ է:

Ապրիլի 22 - Պարզեցի, թե *Ռորշախն* ինչ է: Փաստորեն՝ նույն տեստն էր, որ վիրահատությունից առաջ էի անցել՝ քարտերն ու թանաքի բծերը: Տեստ տվողն էլ էր նույն մարդը:

Սկզբում ահավոր վախեցած էի այդ թանաքաբծերից: Արդեն գիտեի, որ ինձ էլի ասելու է՝ նկարներ գտնեմ, ու նաև գիտեի, որ չեմ կարողանալու: Անընդհատ մտածում էի, թե ինչ լավ կլիներ, եթե ինչ-որ կերպ իմանայի՝ գոնե ինչ

տեսակ նկարներ են այդտեղ թաքցրած: Իսկ գուցե ոչ մի նկար էլ չկա՞: Գուցե ինձ ուղղակի խաբու՞մ են, որ ստուգեն՝ արդյո՞ք ես իսկականից այնքան բութ եմ, որ չեղած բաներ եմ փնտրում: Հենց միայն այդ միտքը հերիք էր, որ սկսեի վրան ջղայնանալ:

«Դե լավ, Չարլի», ասաց նա, «հիշում ես, չէ՞. առաջ էլ ես այս քարտերը տեսել»:

«Իհարկե հիշում եմ»:

Ինքն իմ ասելու ձևից հասկացավ, որ բարկացած եմ, ու ոնց որ թե զարմացավ: «Այո, իհարկե: Հիմա նայիր այս մեկին: Քո կարծիքով՝ սա ի՞նչ կարող է լինել: Ի՞նչ ես տեսնում քարտի վրա: Մարդիկ այս թանաքաբծերի մեջ ամենատարբեր բաներ են տեսնում: Ասա, թե քեզ համար սա ինչի է նման կամ ինչի մասին է ստիպում մտածել»:

Ես շշմեցի: Սպասում էի, որ լրիվ ուրիշ բան պիտի ասեր: «Ուզում եք ասել, որ այս թանաքաբծերի մեջ թաքնված նկարներ չկա՞ն»:

Ինքը հոնքերը կիտեց ու ակնոցը հանեց. «Ի՞նչ»:

«Նկարներ: Թանաքաբծերի մեջ թաքնված նկարներ: Անցած անգամ ասացիք, որ բոլորը կարողանում են դրանք տեսնել, ու ուզում էիք, որ ես էլ գտեմ»:

Ինքն ինձ բացատրեց, որ անցած անգամ գրեթե բառացիորեն նույն բանն է ասել, ինչ հիմա: Չհավատացի, ու մինչև հիմա էլ կասկածում եմ, որ այն անգամ ուղղակի դիտմամբ խաբել է ինձ, որ վրաս ծիծաղի: Չնայած... Արդեն վստահ չեմ: Մի՞թե իրոք *այդքան* հիմար եմ եղել:

Մենք առանց շտապելու նայեցինք բոլոր քարտերը: Մեկը ոնց որ իրարից ինչ-որ բան խլող չղջիկներ լիներ: Մյուսը սուսերամարտող տղամարդկանց էր նման: Ինչ ասես, որ չպատկերացրի. երևի մի քիչ շատ էի տարվել: Բայց մեկ է՝ իրեն այլևս չէի վստահում ու անընդհատ պտտում էի քարտերն ու նույնիսկ հետևներն էի նայում, որ տեսնեմ՝ ինչ-որ բան բա՞ց եմ թողել, թե՞ ոչ: Երբ ծոցատետրում նշումներ էր անում, մի պահ աչքի պոչով նայեցի, ուզում էի կարդալ: Բայց բան չհասկացա. երևի ծածկագրով էր գրում.

WF+A DdF-Ad orig. WF-A SF+obj

Ինչ որ է՝ տեստի իմաստը դեռ չեմ հասկանում: Ինձ թվում է, որ բոլորն էլ կարող են իրականում իրենց չտեսած բաների մասին ստեր հորինել: Ի՞նչ գիտեր, որ հենց իրեն հիմարի տեղ չէի դնում՝ այնպիսի բաներ ասելով, որ իրականում չէի պատկերացնում: Գուցե մի քիչ ավելի շատ բան հասկանամ, երբ դոկտոր Շտրաուսն ինձ թույլ տա հոգեբանության մասին գրքեր կարդալ:

Ապրիլի 25 - Գործարանում հաստոցները շարելու նոր ձև եմ մտածել: Միստր Դոնեգանն ասաց, որ ինքն այդպես տարեկան տասը հազար դոլար կխնայի ու ավելի շատ արտադրանք կտա, ու ինձ քսանհինգ դոլար բոնուս նվիրեց:

Ուզում էի նշելու համար Ջո Կարպին ու Ֆրենկ Ռեյլիին ճաշի հրավիրել, բայց Ջոն

ասաց, որ պիտի կնոջ համար ինչ-որ բան առնի, իսկ Ֆրենկը՝ որ արդեն քեռու աղջկա հետ է պայմանավորված: Կարծում եմ՝ դեռ մի քիչ էլ է ժամանակ պետք, որ իմ փոփոխություններին վարժվեն: Բոլորը ոնց որ ինձնից վախեցած լինեն: Երբ մոտեցա Ամոս Բորգին ու ձեռքս դրեցի ուսին, բառացիորեն օդ թռավ:

Մարդիկ հետս էլ համարյա չեն խոսում, նույնիսկ չեն էլ կատակում, ոնց որ առաջ: Ինձ մի տեսակ մենակ եմ զգում գործի տեղը:

Ապրիլի 27 - Այսօր ամբողջ քաջությունս հավաքեցի ու միսս Կինիանին հրավիրեցի վաղը երեկոյան ընթրելու ու բոնուսս նշելու:

Սկզբում ինքն այնքան էլ համոզված չէր, որ ճիշտ բան ենք անում, բայց հետո հարցրի դոկտոր Շտրաուսին ու նա ասաց, որ կարելի է: Դոկտոր Շտրաուսն ու դոկտոր Նեմուրը ոնց որ թե այնքան էլ լեզու չեն գտնում իրար հետ: Անընդհատ վիճում են: Երբ այս երեկո գնում էի դոկտոր Շտրաուսից հարցնելու ընթրիքի

մասին, լսեցի, թե ոնց են իրար վրա գոռում: Դոկտոր Նեմուրը պնդում էր, որ սա *իր* գիտափորձն է ու *իր* ուսումնասիրությունը, իսկ դոկտոր Շտրաուսը հակաճառում էր, որ ինքն էլ պակաս գործ չի արել, որովհետև ինքն է միսս Կինիանի միջոցով ինձ գտել ու ինքն էլ ինձ վիրահատել է: Դոկտոր Շտրաուսն ասաց, որ մի օր ամբողջ աշխարհում հազարավոր նյարդավիրաբույժներ հենց իր տեխնիկան են օգտագործելու:

Դոկտոր Նեմուրն ուզում է ամսվա վերջում արդեն հրապարակել գիտափորձի արդյունքները: Դոկտոր Շտրաուսը կարծում է, որ դեռ մի քիչ էլ է պետք սպասել: Հայտարարեց, որ դոկտոր Նեմուրին Պրինսթոնի հոգեբանության ամբիոնն ավելի շատ է հետաքրքրում, քան հենց բուն գիտափորձը: Իսկ դոկտոր Նեմուրն ասաց, որ դոկտոր Շտրաուսը սովորական պատեհապաշտի մեկն է, ով փորձում է իր վզին նստած փառքի հասնել:

Երբ դուրս եկա, զգացի, որ դողում եմ: Հիմա հաստատ չեմ կարող ասել՝ ինչու, բայց երևի

զգում էի, որ կյանքումս առաջին անգամ կարողացել էի երկուսին էլ պարզ տեսնել: Հիշում եմ, թե ոնց էր Բարտն ասում, որ դոկտոր Նեմուրի կինն իսկական ջադու է ու ամուսնուն անընդհատ խեղդում է, որ ինչ-որ բան հրապարակի ու հայտնի դառնա: Բարտն ասաց, որ նա ամբողջ կյանքում երազել է հռչակավոր ամուսին ունենալու մասին:

Մի՞թե դոկտոր Շտրաուսն իրոք ուզում է ուրիշի վզին նստած փառքի հասնել:

Ապրիլի 28 - Չեմ հասկանում՝ ինչպես մինչև հիմա չէի նկատել, թե ինչքա՜ն գեղեցիկ է միսս Կինիանը: Շագանակագույն աչքեր ու փափուկ, շագանակագույն մազեր ունի: Ու ընդամենը երեսունչորս տարեկան է: Հիմա նոր եմ գլխի ընկնում, որ ամենասկզբում ինձ թվում էր, թե ինքն ինչ-որ անհասանելի հանճար է ու որ, մանավանդ, շատ, շատ, շա՜տ ծեր է: Իսկ հիմա ամեն տեսնելուցս կարծես ավելի ու ավելի է ջահելանում ու սիրունանում:

Մենք ընթրեցինք ու երկար խոսեցինք: Երբ ասաց, որ այնքան արագ եմ առաջ գնում, որ շուտով իրեն էլ կանցնեմ, ծիծաղեցի:

«Ճիշտ եմ ասում, Չարլի: Դու արդեն ինձնից լավ ես կարդում: Մի հայացքով ամբողջ էջը կարդում ես, իսկ ես այդ ընթացքում կարողանում եմ ընդամենը մի երկու տող ընկալել: Ու ծայրից ծայր հիշում ես կարդացածդ ամեն ինչ: Ես, լավագույն դեպքում, հազիվ հիմնական մտքերն ու ընդհանուր իմաստն եմ հիշում»:

«Բայց ես ինձ խելացի չեմ զգում: Դեռ լիքը բաներ կան, որ չեմ հասկանում»:

Միսս Կինիանը ծխախոտ հանեց, ես վառեցի: «Պիտի ուղղակի *մի քիչ* էլ համբերես: Դու հիմա մի երկու օրում կամ մի երկու շաբաթում այնքան բանի ես կարողանում հասնել, ինչքան սովորական մարդիկ իրենց կյանքի կեսում էլ չեն հասցնում: Հենց դա է ամենաապշեցուցիչը: Դու հսկայական սպունգի նման ներծծում ես ամեն ինչ. փաստեր, թվեր, ընդհանուր տեղեկություններ... Ու շուտով նաև սկսելու ես դրանք համադրել: Տեսնելու ես, թե գիտելիքների տարբեր

բնագավառներն ինչպես են իրար հետ կապված: Աստիճանները շատ են, Չարլի, ու ամեն հաջորդ աստիճանը քեզ ասես ավելի ու ավելի վերև է բարձրացնելու, ու դու ավելի ու ավելի խորն ես տեսնելու քեզ շրջապատող աշխարհը: Ես հիմա ի վիճակի եմ ընդամենը դրա մի փոքրիկ կտորը տեսնելու, ու վախենամ՝ էլ շատ չեմ բարձրանա, բայց դու շարունակելու ես մագլցել վերև ու վերև, ու ամեն մի քայլդ քեզ համար մի նոր աշխարհ է բացելու, որի գոյության մասին դու նույնիսկ չէիր էլ կասկածում»: Հետո մռայլվեց: «Ու Աստված տա... Աստված տա, որ...»

«Ի՞նչ»:

«Ոչինչ, Չարլի: Ուղղակի Աստված տա՝ սխալված չլինեմ, որ քեզ խորհուրդ տվեցի մասնակցել այս ամեն ինչին»:

Ես ծիծաղեցի: «Ո՞նց կարող եք սխալված լինել: Ախր ամեն ինչ ստացվեց, չէ՞: Նույնիսկ Էլջերնոնն է դեռ խելացի»:

Մի որոշ ժամանակ լուռ նստած էինք: Միսս Կինիանը նայում էր, թե ինչպես եմ խաղում նապաստակի ոտքիս ու բանալիներիս կապոցի

հետ, ու ես գիտեի, թե ինքն ինչ է մտածում: Ես չէի ուզում մտածել այդ տարբերակի մասին, ինչպես ծեր մարդը չէր ուզի մահվան մասին մտածել: Ես *գիտեի*, որ սա դեռ սկիզբն է: Ես գիտեի, թե ինքն ինչ նկատի ուներ, երբ խոսում էր աստիճանների մասին, որովհետև արդեն տեսել էի դրանցից մի քանիսը: Ու իրեն իմ հետևում թողնելու միտքը սարսափելի տխրեցնում էր ինձ:

Ես սիրահարված եմ միսս Կինիանին:

Հաշվետվություն 12

Ապրիլի 30 - Գործից դուրս եկա. այլևս չեմ աշխատում Դոնեգանի պլաստմասսայե տուփերի գործարանում: Միստր Դոնեգանն ասաց, որ բոլորի համար էլ լավ կլինի, եթե ես գնամ:

Ախր ի՞նչ եմ արել, ինչու՞ են բոլորն ինձ այսքան ատում:

Այդ մասին առաջին անգամ իմացա, երբ միստր Դոնեգանն ինձ ցույց տվեց խնդրագիրը: Ութ հարյուր քառասուն անուն: Ստորագրել էին գործարանի բոլոր աշխատողները՝ բացի Ֆաննի Գիրդենից: Ցուցակը կարդալը վայրկյանների հարց էր. միանգամից տեսա, որ միայն նրա անունն է պակաս: Մնացած բոլորը պահանջում էին, որ ինձ աշխատանքից ազատեն:

Ջո Կարպն ու Ֆրենկ Ռեյլին չուզեցին հետս այդ մասին խոսել: Ոչ ոք չուզեց՝ բացի Ֆաննիից:

Ֆաննին իմ ճանաչած այն հատուկենտ մարդկանցից է, որոնք համոզմունքներ ունեն ու հավատում են դրանց՝ անկախ այն բանից, թե ամբողջ աշխարհն ինչ է ապացուցում, պնդում կամ անում: Ու նա չէր կարծում, թե ինձ պետք է աշխատանքից ազատել: Ֆաննին սկզբունքորեն դեմ էր կանգնել խնդրագրին ու չնայած բոլոր ճնշումներին ու սպառնալիքներին՝ ոչ մի քայլ չէր զիջել:

«Բայց էս չի նշանակում», նկատեց նա, «որ ես չեմ տեսնում, որ քեզ հետ ինչ-որ ահավոր տարօրինակ բան է կատարվում, Չարլի: Էդ քո փոփոխությունների հետ եմ, էլի: Եսիմ, չգիտեմ: Դու մի ժամանակ բարի, վստահելի, հասարակ մարդ էիր. հա, երևի էնքան էլ խելացի չէիր, բայց գոնե ազնիվ էիր: Ով իմանա՝ հետդ ինչ ես արել, որ մեկ էլ հանկարծ էսքան խելոքացել ես: Մենակ ես չեմ, Չարլի, բոլորն են ասում. էստեղ ինչ-որ բան էն չի»:

«Ի՞նչ ես խոսում, Ֆաննի: Ի՞նչն էն չի, երբ մարդ խելացի է դառնում կամ ուզում է հասկանալ ու ճանաչել իրեն շրջապատող աշխահը»:

Ֆաննին առանց պատասխանելու նորից գործի անցավ: Շրջվեցի, որ դուրս գամ, երբ առանց ինձ նայելու ասաց. «Սխալ էր, երբ Եվան լսեց օձին ու կերավ իմաստության ծառի պտուղը: Սխալ էր, երբ տեսավ, որ մերկ է: Եթե էդ ամեն ինչը չլիներ, մենք հիմա ո՛չ կծերանայինք, ո՛չ կհիվանդանայինք, ո՛չ էլ կմեռնեինք»:

Հիմա հերթական անգամ զգում եմ, թե ինչ եմ ամոթից վառվում: Իմ այս նոր խելացիությունը սեպ է խրել իմ ու այն բոլոր մարդկանց միջև, ում մի ժամանակ ճանաչում ու սիրում էի: Առաջ ծաղրում ու արհամարհում էին ինձ, որովհետև հիմար ու բութ էի. հիմա ատում են, որովհետև խելացի եմ ու խորաթափանց: Աստված իմ, ախր ի՞նչ են ուզում ինձնից:

Ինձ գործարանից դուրս շպրտեցին: Հիմա ավելի մենակ եմ, քան երբևէ:

Մայիսի 15 - Դոկտոր Շտրաուսը շատ է բարկացել, որ արդեն երկու շաբաթ է՝ ոչ մի հաշվետվություն չեմ գրում: Ինչ-որ իմաստով ինքը

ճիշտ է, որովհետև լաբորատորիան հիմա ինձ կանոնավոր աշխատավարձ է վճարում: Ասացի, որ շատ զբաղված էի՝ անընդհատ կարդում էի ու մտածում: Երբ նկատեցի, որ գրելն այնքան դանդաղ գործ է, որ նյարդայնանում եմ, խորհուրդ տվեց, որ սովորեմ գրամեքենայով տպել: Հիմա գրելն արդեն շատ ավելի հեշտ է, որովհետև կարողանում եմ բոպեում մոտ յոթանասունհինգ բառ արագությամբ տպել: Դոկտոր Շրաուսն անդադար հիշեցնում է, որ պարզ խոսեմ ու գրեմ, որպեսզի ուրիշները կարողանան ինձ հասկանալ:

Փորձեմ շարադրել նախորդ երկու շաբաթում տեղի ունեցածը: Անցած երեքշաբթի ինձ ու Էլջերնոնին ներկայացրին Ամերիկայի հոգեբանների ասոցիացիայի ու Համաշարհային հոգեբանական ասոցիացիայի համատեղ նիստին: Մենք խոշոր սենսացիայի պատճառ դարձանք: Դոկտոր Նեմուրն ու դոկտոր Շտրաուսը շատ հպարտ էին:

Կասկածում եմ, որ դոկտոր Նեմուրը, ով վաթսուն տարեկան է (տասը տարով ավելի

մեծ, քան դոկտոր Շտրաուսը), ցանկանում է արդեն իսկ վայելել իր աշխատանքի պտուղները: Պատճառը, անկասկած, տիկին Նեմուրի ճնշումներն են:

Հակառակ նախկինում ձևավորած տպավորությանս՝ հիմա հասկանում եմ, որ դոկտոր Նեմուրը բնավ էլ հանճար չէ: Հրաշալի ու սուր միտք ունի, սակայն սեփական ուժերի հանդեպ անվստահությունը թույլ չի տալիս, որ իր ընդունակությունները լիովին օգտագործի: Ուզում է, որ մարդիկ իրեն հանճար համարեն, և այդ պատճառով էլ իր համար խիստ կարևոր է, որ աշխարհը ճանաչի և ընդունի իր աշխատանքը: Կարծում եմ՝ դոկտոր Նեմուրը վախենում էր արդյունքների հրապարակումը հետաձգելուց՝ անհանգստանալով, որ ուրիշ ինչ-որ մեկը կարող է նման հայտնագործություն անել ու իրեն այդ պատվից զրկել:

Դոկտոր Շտրաուսին, ընդհակառակը, կարելի է հանճար համարել, չնայած զգում եմ, որ իր գիտելիքների դաշտը խիստ սահմանափակ է: Ինքը սովորել է նեղ մասնագիտական

կրթության ավանդույթներով՝ անհարկի անտեսելով առավել լայն գիտելիքների ասպեկտները: Իսկ դա աններելի է անգամ նյարդավիրաբույժի համար:

Ապշեցի, երբ իմացա, որ բոլոր մեռած լեզուներից ընդամենը լատիներեն, հունարեն ու եբրայերեն է կարողանում կարդալ, ու որ գրեթե ոչ մի բան չի հասկանում մաթեմատիկայից, եթե բացառենք տարրական վարիացիոն հաշվարկները: Երբ դա խոստովանեց, հիասթափություն զգացի: Ասես մինչ այդ պահը գաղտնի պահած լիներ իր անհատականության այդ կողմը՝ ցանկանալով ինձ մոլորեցնել և փորձելով ձևացնել, թե (ինչը, ինչպես նկատում եմ, շատերին է հատուկ) ինքն այն չէ, ինչ իրականում: Իմ ճանաչած մարդկանցից և ոչ ոք այն չէ, ինչ թվում է:

Դոկտոր Նեմուրն իրեն ակնհայտորեն անհարմար է զգում կողքիս: Երբեմն, երբ փորձում եմ հետը խոսել, ուղղակի տարօրինակ հայացքով ինձ է նայում ու շրջվում է: Սկզբում շատ բարկացա, երբ դոկոր Շտրաուսն ասաց, որ իմ

ներկայությունը դոկտոր Նեմուրի մեջ թերարժեքության բարդույթ է առաջացնում: Ինձ թվաց՝ ծաղրում է, իսկ ես չափազանց ծանր եմ տանում, երբ վրաս ծիծաղում են:

Ինչպե՞ս կարող էի իմանալ, որ Նեմուրի նման պատվավոր հոգեբան-փորձարարը ո՛չ հնդկերեն գիտի, ո՛չ էլ չինարեն: Չէ՞ որ դա պարզապես անհեթեթություն է, մանավանդ եթե հաշվի առնենք, թե Հնդկաստանն ու Չինաստանն այսօր ինչ ահռելի աշխատանք են կատարում հենց իր բնագավառում:

Դոկտոր Շտրաուսին հարցրի, թե ինչպե՞ս պիտի Նեմուրը պատասխանի իր մեթոդներն ու արդյունքները խստագույնս քննադատող Ռահաջամատիին, եթե անգամ դրանք կարդալ չի կարող: Դոկտոր Շտրաուսի դեմքին հայտնված տարօրինակ արտահայտությունը կարող էր միայն երկու բան նշանակել. կա՛մ նա ինքը չի ուզում Նեմուրին հայտնել, թե ինչ են ասում Հնդկաստանում, կա՛մ էլ (և դա ինձ ամենաշատն է անհանգստացնում) դոկտոր Շտրաուսը նույնպես ոչ մի բանից տեղյակ չէ: Հարկավոր է շատ

զգույշ լինել: Թերևս ստիպված լինեմ պարզ գրել ու խոսել, որպեսզի մարդիկ վրաս չծիծաղեն:

Մայիսի 18 - Խիստ անհանգստացած եմ: Անցած գիշեր շաբաթվա մեջ առաջին անգամ հանդիպեցի միսս Կինիանին: Եվ չնայած փորձում էի խուսափել ցանկացած ինտելեկտուալ քննարկումներից և աշխատում էի խոսակցությունը պահել առօրյա-հասարակ շրջանակներում, նա պարզապես շփոթված նայեց ինձ ու հարցրեց, թե ի՞նչ նկատի ունեմ, երբ հարցնում եմ Դորբերմաննի Հինգերորդ կոնցերտի մաթեմատիկական դիսպերսիոն համարժեքի մասին:

Երբ փորձեցի բացատրել, ընդհատեց ու սկսեց ծիծաղել: Իհարկե՝ մի քիչ բարկացա, բայց ենթադրում եմ, որ պարզապես սխալ մակարդակի խոսակցություն էի սկսել: Անկախ այն բանից, թե ինչ եմ փորձում հետը քննարկել, մենք իրար չենք հասկանում: Ստիպված եմ ևս մեկ անգամ վերանայել սեմանտիկ

պրոգրեսիայի մակարդակների մասին Վրոստադի հավասարումները: Նկատում եմ, որ այլևս գրեթե չեմ կարողնում հաղորդակցվել մարդկանց հետ: Փառք Աստծու, որ գոնե կան գրքերը, երաժշտությունն ու այն խնդիրները, որոնց մասին կարող եմ մտածել: Հիմա համարյա միշտ մենակ եմ միսս Ֆլիննի վարձու բնակարանում և հազարից մեկ եմ ինչ-որ մեկի հետ խոսում:

Մայիսի 20 - Եթե փողոցի անկյունի բիստրոյում, որտեղ սովորաբար ընթրում եմ, սպասքը չկոտրվեր, գուցե երբեք էլ չնկատեի նոր ամսան լվացողին՝ մոտ տասնվեց տարեկան մի տղայի:

Ափսեները շրխկացին հատակին ու փշուր-փշուր եղան՝ ձենապակու բեկորներ շաղ տալով սեղանների տակ: Տղան, շփոթված ու վախեցած, դատարկ սկուտեղը ձեռքին՝ մնաց տեղում քարացած: Հաճախորդների սուլոցներն ու ծաղրը («էս ի՞նչ թքել թքիր», «աչքդ լուՙյս» ու

«դու էլ առանց գործ մնացիր, էլի». գոռոցներ, որ անխուսափելիորեն ուղեկցում են հասարակական վայրերում ջարդվող ցանկացած բաժակի ու ափսեի) ասես է՛լ ավելի շփոթեցրին նրան:

Երբ բիստրոյի տերը եկավ տեսնելու, թե ինչ աղմուկ է, տղան ամբողջ մարմնով կծկվեց, ասես սպասում էր, որ իրեն պիտի խփեն, ու ձեռքերը բարձրացրեց՝ փորձելով հարվածից պաշտպանվել:

«Հա լա՛վ: Հա լա՛վ, հաստագլուխի մեկը», գոռաց տերը, «Գնա ավելը բեր ու էս զիբիլը մաքրիր: Ավե՛լը: Ասում եմ՝ ավե՛լը բեր, ապուշ կենդանի, խոհանոցի՛ց: Ոչ մի հատիկ չմնա»:

Տղան հասկացավ, որ իրեն չեն պատժելու: Վախի արտահայտությունը չքացավ դեմքից, ու երբ ավելը ձեռքին վերադարձավ՝ արդեն ժպտում էր ու քթի տակ ինչ-որ բան էր երգում: Մարդիկ լռեցին, բայց հաճախորդներից մի քանիսը շարունակում էին ծիծաղել ու ծաղրել նրան.

«Հետևդ նայիր, ջահել ջան, ա՛յ էնտեղ էլ ես մի հատ ընտիր կտոր թողել»:

«Ապրե՛ս, դե մի հատ էլ, ավելի՛ աշխույժ»:

«Դե լա՛վ, հա՛, էդքան էլ բութ չի: Զարդելը լվալուց հաստատ ավելի հեշտ է»:

Տղայի դատարկ հայացքը սահում էր մի զվարճացող հանդիսատեսից մյուսի վրա, դեմքին աստիճանաբար արտացոլվում էին մարդկանց քմծիծաղները, և ի վերջո՝ խեղճ-խեղճ ժպտաց մի կատակի վրա, որ ամենայն հավանականությամբ՝ նույնիսկ չէր էլ հասկացել:

Տեսնելով այդ բութ, ոչինչ չարտահայտող ժպիտն ու մանկական լայն բացված աչքերը, որտեղ անվստահությունը միախառնված էր հաճոյանալու պատրաստակամության հետ, կրծքումս հանկարծ ինչ-որ այրող ցավ զգացի: Մարդիկ ծիծաղում էին տղայի վրա, որովհետև նա մտավոր հետամնաց էր:

Ու ես էլ էի ծիծաղում նրանց հետ:

Ներսումս հանկարծ մի կատաղի զայրույթ բռնկվեց իմ ու բոլոր նրանց նկատմամբ, ովքեր ծաղրում էին տղային: Տեղիցս վեր թռա ու գոռացի. «Ձայններդ կտրե՛ք: Հանգի՛ստ թողեք տղային: Ինքը մեղավոր չէ՛, որ ոչինչ չի

հասկանում: Ինքը չի՛ կարող փոխվել: Բայց Աստծու սիրուն, ախր ինքն է՛լ է մարդ»:

Սրահում լռություն տիրեց: Մտքումս անիծեցի ինձ՝ ինքնատիրապետումս կորցնելու ու տեսարան սարքելու համար: Աշխատելով տղային չնայել՝ փակեցի հաշիվն ու առանց ընթիքիս դիպչելու՝ դուրս եկա: Ամաչում էի երկուսիս համար էլ:

Ինչու՞ են այն ազնիվ ու զգայուն մարդիկ, ովքեր երբեք չեն նեղացնի առանց ձեռքերի, ոտքերի կամ աչքերի ծնված հաշմանդամին... Ինչու՞ են այդ նույն մարդիկ առանց մտածելու նեղացնում թույլ մտավոր ունակություններով ծնվածին: Ինձ կատաղության էր հասցնում այն միտքը, որ ոչ այնքան վաղուց ես էլ էի այդ տղայի նման առանց հասկանալու դառնում ամբոխի ծաղրածուն:

Իսկ ես գրեթե մոռացել էի այդ մասին:

Ես թաքցրել էի հին Չարլի Գորդոնի պատկերն ինքս ինձնից: Ինձ թվում էր, թե խելացի դառնալով՝ պիտի կարողանամ անցյալը մտքիցս ջնջել: Բայց այսօր, նայելով այդ տղային, առաջին

անգամ տեսա, թե ով էի ես իրականում: *Ես լրիվ նույնն էի*:

Այնքան քիչ ժամանակ է անցել այն օրից, երբ հասկացա, որ մարդիկ միշտ ծաղրում էին ինձ: Իսկ հիմա տեսնում եմ, որ ես էլ եմ արդեն անգիտակցաբար կանգնած իրենց կողքին ու ծիծաղում եմ ինքս ինձ վրա: Ու հենց դա է ամենացավոտը:

Հիմա հաճախ եմ վերընթերցում հին հաշվետվություններս ու տեսնում եմ անգրագիտություններս, մանկական պարզամտություններս, թույլ, ընկճված միտքս, որ ասես մութ սենյակում փակված՝ բանալու անցքից կարոտով նայում է դրսում շողացող կուրացուցիչ լույսին: Տեսնում եմ, որ այդքան թանձրամիտ լինելով հանդերձ՝ գիտակցում էի սեփական անլիարժեքությունս, հասկանում էի, որ մյուսներն ինչ-որ բան ունեն, որից ես զուրկ եմ, որ անհասանելի է ինձ: Իմ մտավոր կուրության մեջ կարծում էի, թե դա ինչ-որ կերպ կապված է կարդալ ու գրել իմանալու հետ, և համոզված էի, որ եթե տիրապետեմ այդ

ունակություններին, ինքնըստինքյան խելացի կդառնամ:

Նույնիսկ թուլամիտն է ուզում մյուս մարդկանց նման լինել:

Երեխան կարող է չիմանալ՝ ինչպես սնվել կամ ինչ ուտել, բայց գիտի, թե ինչ է քաղցը:

Մինչ այժմ ես չգիտեի, թե իրականում ինչպիսին էի այն ժամանակ: Չգիտեի՝ չնայած իմ ողջ խորաթափանցությանը:

Այս օրը շատ կարևոր էր ինձ համար: Ավելի հստակ տեսնելով անցյալը՝ ես վճռեցի իմ գիտելիքներն ու ունակությունները ծառայեցնել մարդկանց ինտելեկտուալ մակարդակը բարձրացնելու գործին: Ո՞վ է ավելի լավ պատրաստված այդ աշխատանքի համար: Ուրիշ ո՞վ է ապրել երկու աշխարհներում էլ: Ես էլ եմ իրենցից մեկը: Ես ուղղակի պարտավոր եմ օգտագործել իմ շնորհն ու ինչ-որ բան անել բախտակիցներիս համար:

Վաղն ևեթ դոկտոր Շտրաուսի հետ կքննարկեմ մեր համատեղ աշխատանքի հարցը: Գուցե կարողանանք միասին բացահայտել, թե ինչպես

կարելի է լայնորեն կիրառել այն վիրահատությունը, որ առաջին անգամ փորձարկեցին ինձ վրա: Արդեն նույնիսկ որոշ լուծումներ գտել եմ:

Ախր այնքա՞ն շատ բան է կարելի անել: Եթե ինձ կարողացան հանճար դարձնել, ապա ինչո՞ւ չի կարելի նույնն անել ինձ նման հազարավոր ուրիշներ հետ: Իսկ ի՞նչ ֆանտաստիկ մակարդակների կարելի է հասնել՝ վիրահատելով սովորական մարդկանց: Իսկ *հանճարների՞ն*:

Դեռ ինչքա՞ն փակ դռներ կան: Անհամբերությունից վառվում եմ:

Հաշվետվություն 13

Մայիսի 23 - Դա տեղի ունեցավ այսօր: Էլջերնոնն ինձ կծեց: Սովորականի նման գնացել էի լաբորատորիա՝ նրան այցելելու, ու երբ վանդակից հանեցի, ատամները խրեց ձեռքիս մեջ: Էլջերնոնին նորից հետ դրեցի ու մի որոշ ժամանակ հետևում էի: Տարօրինակորեն անհանգիստ էր ու չարացած:

Մայիսի 24 - Բարտը, որ նաև զբաղվում է լաբորատորիայի կենդանիներին խնամելով, ասաց, որ Էլջերնոնը փոխվում է: Ավելի ու ավելի անմարդամոտ է դառնում, հրաժարվում է լաբիրինթոսն անցնելուց, մոտիվացված չէ: Ու չի ուտում: Բոլորն անհանգիստ են, չգիտեն, թե դա ինչ կարող է նշանակել:

Մայիսի 25 - Էլջերնոնին արդեն կերակրում են, որովհետև հրաժարվում է փոխվող կողպեքի խնդիրը լուծելուց: Մարդիկ ինձ նույնացնում են Էլջերնոնի հետ: Ինչ-որ իմաստով մենք երկուսս էլ մեր տեսակի մեջ առաջինն ենք: Բոլորը ձևացնում են, թե պարտադիր չէ, որ Էլջերնոնի վարքն ինձ հետ կապված ինչ-որ բան նշանակի: Սակայն դժվար է թաքցնել այն փաստը, որ գիտափորձի համար օգտագործված կենդանիների մի մասը նույնպես սկսել է իրեն տարօրինակ պահել:

Դոկտոր Շտրաուսն ու դոկտոր Նեմուրը խնդրեցին, որ այլևս լաբորատորիա չգնամ: Գիտեմ, թե ինչ են մտածում, բայց չեմ կարող համաձայնել: Ես դեռ չեմ հրաժարվել նրանց ուսումնասիրությունները շարունակելու մտադրությունից: Չնայած այդ երկու փայլուն գիտնականների հանդեպ տածած իմ խորին հարգանքին՝ ես, այնուամենայնիվ, շատ հստակ տեսնում եմ նրանց հնարավորությունների սահմանները: Եվ եթե գոյություն ունի ինչ-որ պատասխան, ես ինքս պիտի դա գտնեմ:

ժամանակն անսպասելիորեն խիստ կարևոր է դարձել ինձ համար:

Մայիսի 29 - Ինձ տրամադրեցին իմ սեփական լաբորատորիան ու թույլ տվեցին շարունակել հետազոտություններս: Զգում եմ, որ մոտ եմ: Գիշեր-ցերեկ աշխատում եմ: Խնդրեցի, որ ծալովի մահճակալ բերեն լաբորատորիա: Գրելուն հատկացված ժամանակիս մեծ մասը տրամադրում եմ նշումներիս, որ պահում եմ առանձին թղթապանակում, սակայն հին սովորությանս համաձայն՝ ժամանակ առ ժամանակ մտածածս ու զգացածս թղթին հանձնելու կարիք եմ զգում:

Զգում եմ, որ ինտելեկտի հաշվարկը ուսումնասիրության խիստ գրավիչ ու հետաքրքիր բնագավառ է: Սա հենց այն ոլորտն է, որտեղ հարկավոր է կիրառել ձեռք բերածս ողջ գիտելիքները: Ինչ-որ իմաստով՝ ես իմ ամբողջ կյանքի ընթացքում շարունակ կանգնած եմ եղել այս խնդրի առաջ:

Մայիսի 31 - Դոկտոր Շտրաուսը կարծում է, որ չափազանց շատ եմ աշխատում: Դոկտոր Նեմուրն ասում է, որ փորձում եմ մի երկու շաբաթվա մեջ տեղավորել այն բոլոր ուսումնասիրություններն ու մտքերը, որոնց համար մի ամբողջ կյանք է հարկավոր: Գիտեմ, որ հանգստի կարիք ունեմ, բայց ներսումս ինչ-որ բան ինձ առաջ է մղում ու թույլ չի տալիս կանգ առնել: Ես պարտավոր եմ գտնել Էլջերնոնի կտրուկ ռեգրեսի պատճառը: Պարտավոր եմ իմանալ՝ արդյո՞ք ինձ էլ նույն բանը չի սպառնում: Եվ եթե այո, ապա *երբ*:

Հունիսի 4

ՆԱՄԱԿ ԴՈԿՏՈՐ ՇՏՐԱՈՒՍԻՆ (պատճեն)

Թանկագին դոկտոր Շտրաուս,

Ներդիր ծրարով ուղարկում եմ ձեզ իմ հաշվետվության պատճենը, որ վերնագրել եմ «Էլջերնոն-Գորդոնի էֆեկտը. արհեստականորեն աճեցրած ինտելեկտի կառուցվածքի և ֆունկցիաների ուսումնասիրություն»: Կցանկանայի, որ կարդայիք ու հրապարակեիք այն:

Ինչպես տեսնում եք՝ իմ գիտափորձերն ավարտված են: Հաշվետվության մեջ ներառել եմ իմ բոլոր բանաձևերը, իսկ հավելվածում նաև ներկայացրել եմ մաթեմատիկական վերլուծություններս: Անկասկած՝ այդ ամենը ստուգման կարիք ունի:

Գիտակցելով այս ամենի կարևորությունը Ձեր և դոկոր Նեմուրի համար (կարիք կա՞

արդյոք նշելու, որ ինձ համար նույնպես), ես ինքս տասնյակ անգամներ ստուգել և վերստուգել եմ ուսումնասիրությանս արդյունքները՝ հուսալով ինչ-որ տեղ սխալ գտնել: Ցավում եմ, բայց արդյունքները ճիշտ են: Եվ այնուամենայնիվ, հաշվի առնելով գիտության շահը, ես շնորհակալ եմ, որ գոնե կարողացա ինչ-որ բան ավելացնել մարդու ուղեղի գործունեության և ինելեկտի արհեստական աճը կառավարող օրենքների մասին մինչ օրս եղած գիտելիքներին:

Հիշում եմ, թե ինչպես էիք մի անգամ ինձ ասում, որ գիտափորձի ձախողումը կամ վարկածի հերքումը նույնքան կարևոր են գիտության զարգացման համար, որքան հաջողությունը: Հիմա արդեն հասկանում եմ, թե Դուք որքան ճիշտ էիք: Եվ սակայն՝ խորապես ցավում եմ, որ այս բնագավառում իմ ունեցած ներդրումը պիտի հանգչի այն երկու մարդկանց աշխատանքի փլատակների վրա, ում ես այդքան բարձր եմ գնահատում:

Անկեղծորեն Ձեր Չարլզ Գորդոն:

կից՝ հաշվեփով.

Հունիսի 5 - Չպետք է թույլ տամ, որ զգացմունքներս մթագնեն գիտակցությունս: Գիտափորձիս արդյունքները կասկածի տեղիք չեն տալիս: Անգամ իմ սեփական կայծակնային զարգացումը չի կարող ստիպել անտեսել այն փաստը, որ դոկտոր Շրաուսի և դոկտոր Նեմուրի մշակած վիրահատական մեթոդով ինտելեկտի եռապակումն այսուհետ հարկ է դիտարկել որպես մի հայտնագործություն, որի լայն կիրառությունը (ներկայումս) գործնականորեն քիչ է հնարավոր կամ նույնիսկ անհնար է:

Ուսումնասիրելով Էլջերնոնի մասին վերջին նյութերն ու տվյալները՝ տեսնում եմ, որ չնայած նա դեռ իր ֆիզիկական զարգացման վաղ փուլում է, մտավոր ունակություններն արդեն ռեգրես են ապրում: Մկանային ակտիվությունը նվազել է, ներզատիչ գեղձերի գործունեությունը՝ թուլացել, նկատվում է շարժումների կոորդինացիայի աստիճանական կորուստ:

Առկա են նաև զարգացող ամնեզիայի անհերքելի նշաններ:

Ինչպես արդեն նշել եմ հաշվետվությանս մեջ՝ այդ ամենը, ինչպես նաև ֆիզիկական ու մտավոր դեգրադացիայի մի շարք այլ սինդրոմներ կարելի է զգալի վիճակագրական ճշգրտությամբ կանխատեսել՝ կիրառելով իմ բանաձևը:

Վիրահատական միջամտությունը, որին մենք երկուսս էլ ենթարկվել ենք, ակտիվացրել ու արագացրել է մեր բոլոր մտավոր գործընթացները: Հաջորդող բոլոր չկանխատեսված զարգացումները, որոնք համարձակություն եմ ունեցել կոչելու «Էլջերնոն-Գորդոնի էֆեկտ», ինտելեկտի այս խթանման տրամաբանական շարունակությունն են: Այդտեղ ապացուցված հիպոթեզը կարելի է համառոտ ամփոփել հետևյալ կարճ նախադասությամբ. արհեստականորեն աճեցրած ինտելեկտն ի վերջո նվազում է այնպիսի արագությամբ, որն ուղիղ համեմատական է դրա աճի մակարդակին:

Վստահ եմ, որ սա ինքնին արդեն կարևոր հայտնագործություն է:

Քանի դեռ ընդունակ եմ գրելու՝ կշարունակեմ շարադրել այս հաշվետվություններս. սրանք ինձ հաճույք պատճառող սակավաթիվ բաներից մեկն են: Հարկ է նշել սակայն, որ ըստ ամենայնի՝ իմ սեփական մտավոր դեգրադացիան շատ արագ է լինելու:

Արդեն սկսել եմ նկատել էմոցիոնալ անկայունության ու մոռացկոտության նշաններ՝ մոտալուտ անկմանս առաջին ախտանշանները:

Հունիսի 10 - Դեգրադացիան խորանում է: Ցրված եմ դարձել: Երկու օր առաջ Էլջերնոնը մեռավ: Հերձումը ցույց տվեց, որ կանխատեսումներս ճիշտ էին: Ուղեղի քաշը նվազել էր, ծալքերն ընդհանուր առմամբ բավականին հարթվել էին, ակոսներն, ընդհակառակը, խորացել ու լայնացել:

Կարծում եմ, որ նույն բանը կատարվելու է կամ արդեն կատարվում է ինձ հետ: Այժմ, երբ ամեն ինչ արդեն հաստատ է, չեմ ուզում, որ դա տեղի ունենա:

Էլջերնոնին դրեցի պանրի դատարկ տուփի մեջ ու թաղեցի պարտեզում: Լաց եղա:

Հունիսի 15 - Դոկտոր Շտրաուսն էր նորից եկել: Դուռը չբացեցի ու ասացի, որ հեռանա: Ուզում եմ, որ ինձ հանգիստ թողնեն: Նեղացկոտ ու դյուրագրգիռ եմ դարձել: Զգում եմ, թե ինչպես է շուրջս թանձրանում խավարը: Չեմ կարողանում ինքնասպանության մասին մտքերը գլխիցս հանել: Ստիպված եմ անընդհատ ինքս ինձ հիշեցնել, թե իմ այս օրագիրը հետո ինչքան մեծ գիտական կարևորություն է ունենալու:

Այնքան տարօրինակ է, երբ վերցնում ես ընդամենը մի երկու ամիս առաջ հաճույքով կարդացածդ գիրքն ու հասկանում, որ լրիվ մոռացել ես: Հիշում եմ, թե մի ժամանակ ինչքան բարձր էի գնահատում Ջոն Միլտոնի ստեղծագործությունները, բայց երբ փորձեցի նորից կարդալ «Կորուսյալ դրախտը», բացարձակապես ոչ մի բան չհասկացա: Այնքան էի

կատաղել, որ գիրքը շպրտեցի սենյակի մյուս ծայրը:

Պիտի փորձեմ գոնե ինչ-որ բան պահել: Սովորածներիցս գոնե ինչ-որ բան: Աստված իմ, խնդրում եմ, մի՛ խլիր ամեն ինչ:

Հունիսի 19 - Երբեմն գիշերները դուրս եմ գալիս զբոսնելու: Անցած գիշեր չէի կարողանում տանս տեղը հիշել: Ինձ ոստիկանը տուն բերեց: Ինչ-որ տարօրինակ զգացում ունեմ, որ այս ամենն արդեն մի անգամ եղել է՝ շատ վաղուց: Շարունակում եմ ինքս ինձ համոզել, որ ես աշխարհում միակ մարդն եմ, ով կարող է նկարագրել, թե հետս ինչ է կատարվում:

Հունիսի 21 - Ախր ինչու՞ չեմ կարողանում հիշել: Չի կարելի հանձնվել: Օրերով պառկած եմ մնում անկողնում ու չեմ հասկանում՝ ով եմ կամ որտեղ եմ: Հետո հանկարծ ամեն ինչ միանգամից հետ է գալիս: Ամնեզիան ավելի ու

ավելի է խորանում: Ի հայտ են գալիս ծերունական ախտանշաններ՝ երկրորդ մանկություն եմ ապրում: Ու գիտեմ, որ սա դեռ ամենը չէ: Ինչ-որ անողոք տրամաբանություն կա այս ամենի մեջ: Ես այնքան շատ բան սովորեցի՝ այնքան կարճ ժամանակում: Իսկ հիմա միտքս գլխապտույտ արագությամբ քայքայվում է: Ոչ մի դեպքում չի կարելի համակերպվել: Ես կպայքարե՛մ սրա դեմ: Անկախ ինձնից՝ անընդհատ աչքիս առաջ են գալիս այն բիստրոյի տղան, դեմքի դատարկ արտահայտությունը, բութ ժպիտը, վրան ծիծաղող մարդիկ: Ոչ, աղաչում եմ, միայն թե ոչ կրկին նույն բանը...

Հունիսի 22 - Սկսել եմ մոռանալ ոչ այնքան վաղուց սովորածս բաները: Ըստ երևույթին՝ ամեն ինչ դասական եղանակով է զարգանում. առաջին հերթին մոռանում ես վերջին սովորածդ: Թե՞ դասականը ուրիշ էր... Չգիտեմ, մի անգամ էլ է պետք նայել:

Նորից կարդացի «Էլջերնոն-Գորդոնի էֆեկտի» մասին հաշվետվությունս: Կարդալու ընթացքում ինձ հանգիստ չէր տալիս այն միտքը, թե դա ինչ-որ ուրիշ մեկն է գրել: Որոշ հատվածներ նույնիսկ չէի էլ հասկանում:

Շարժողական գործունեությունս խաթարված է: Անընդհատ սայթաքում եմ, ինչ-որ բաների եմ բախվում: Գրամեքենայով տպելը քանի գնում՝ ավելի է դժվարանում:

Հունիսի 23 - Լրիվ հրաժարվեցի գրամեքենայից: Շարժումներիս կոորդինացիան շատ է թուլացել: Զգում եմ, որ ավելի ու ավելի դանդաղ եմ շարժվում: Այսօր մի սարսափելի ցնցում ապրեցի: Ուզում էի վերընթերցել ուսումնասիրությանս համար օգտագործված հոդվածներից մեկը՝ Կրյուգերի «Über psychische Ganzheit»-ը, հուսալով, որ դա կօգնի ինձ հասկանալ իմ կատարած աշխատանքը: Սկզբում ինձ թվաց, թե տեսողությանս հետ ինչ-որ բան այն չէ: Հետո հասկացա, որ այլևս չեմ կարողանում գերմաներեն կարդալ:

Փորձեցի մյուս բոլոր լեզուները: Ամեն ինչ կորել է:

Հունիսի 30 - Մի շաբաթ է՝ չէի համարձակվում ոչինչ գրել: Ամեն ինչ ավազի նման սահում է մատներիս արանքով ու անհետանում: Ունեցածս գրքերի մեծ մասը հիմա արդեն չափազանց բարդ է ինձ համար: Ու դա ինձ կատաղության է հասցնում, որովհետև գիտեմ, որ ընդամենը մի երկու շաբաթ առաջ կարողանում էի դրանք կարդալ ու հասկանալ:

Անընդհատ ինքս ինձ համոզում եմ, որ պետք է շարունակեմ գրել այս հաշվետվությունները, որպեսզի գոնե ուրիշներն էլ իմանան, թե ինչ է կատարվում ինձ հետ: Բայց ճիշտ բառեր ընտրելն ու դրանց ուղղագրությունը հիշելը քանի գնում՝ ավելի դժվար է դառնում: Հիմա արդեն ստիպված եմ նույնիսկ ամենապարզ բառերը բառարանով ստուգել: Զղայնանում եմ ինքս ինձ վրա:

Դոկտոր Շտրաուսը համարյա ամեն օր գալիս է մոտս, բայց ես ասացի, որ ոչ ոքի չեմ ուզում տեսնել ու ոչ էլ ինչ-որ մեկի հետ խոսել: Ինքն իրեն մեղավոր է զգում: Բոլորն են իրենց մեղավոր զգում: Բայց ես ոչ ոքի չեմ մեղադրում: Գիտեի, թե ինչ կարող էր լինել: Բայց մեկ է՝ դրանից այս ամենը պակաս ցավոտ չի դառնում:

Հուլիսի 7 - Չհասկացա ամբողջ շաբաթս ուր կորավ: Գիտեմ որ այսօր կիրակի է որովհետեվ պատուհանից տեսնում եմ թե ինչպես են մարդիկ եկեղեցի գնում: Ինձ թվում է ամբողջ շաբաթ անկողնուցս դուրս չեմ եկել միայն հիշում եմ թե ինչպես էր միսիս Ֆլինն ինձ մի երկու անգամ ուտելիք բերում: Անընդհատ ինքս ինձ կրկնում եմ որ պիտի ինչոր բան անեմ բայց հետո մոռանում եմ կամ երեվի ավելի հեշտ է ուղակի չանել այն ինչ ասում եմ որ պիտի անեմ:

Վերջերս շատ եմ մտածում հորս ու մորս մասին: Մի նկար գտա որտեղ մենք երեքով

ծովափին ենք: Հայրս թեվի տակ մի մեծ գնդակ ունի իսկ մայրս բռնել է ձեռքս: Ես չեմ հիշում որ նրանք այնպիսին լինեն ինչպիսին նկարի մեջ են: Միայն հիշում եմ թե ինչպես էր հայրս համարյա ամեն օր հարբում ու փողի համար կռիվ անում մորս հետ:

Ինքը հազարից մեկ էր սափրվում ու գրկելուց միշտ երեսս ծակում էր: Մայրս ասում էր որ հայրս մահացել է, բայց իմ զարմիկ Միլտին մի անգամ ասաց որ ինքը լսել է թե ինչպես են իր ծնողները ասում որ իմ հայրը փախել է ուրիշ կնոջ հետ: Երբ մորս հարցրի այդ մասին ինձ ապտակեց ու գոռաց որ հայրս մեռած է: Ինձ թվում է երբեք էլ չեմ իմանա թե ճիշտը որն էր բայց դե ինձ համար արդեն մեկ է: (Հայրս մի անգամ ասաց որ ինձ կտանի ֆերմա կովերին տեսնելու բայց այդպես էլ չտարավ: Ինքը երբեք իր խոստումները չէր պահում):

Հուլիսի 10 - Տանտիրուհիս միսիս Ֆլինները ահավոր անհանգիստ է ինձ համար: Ասում է

որ երբ տեսնում է թե ինչպես եմ օրերով պառկած մնում ու ոչմի բան չեմ անում միանգամից իր տղային է հիշում ու մեկ էլ թե ոնց դրան տնից դուրս շպրտեց: Ասաց որ թամբալներին տանել չի կարողանում: Ուրիշ բան եթե հիվանդ եմ բայց եթե թամբալ եմ էդ արդեն չեղավ ու ինքը էդ չի հանդուրժի: Ես ասացի որ ոնցոր թե գրիպ եմ:

Ամեն օր փորցում եմ գոնե մի քիչ կարթալ հիմնականում պատմվածքներ բայց մեկմեկ ստիպված եմ լինում նույն բանը մի քանի անգամ կարթալ որովհետև կարթացածս չեմ հասկանում: Ու գրելն էլ է դժվարացել: Գիտեմ որ պիտի բոլոր բառերը բառարանում նայեմ բայց ախր շատ դժվար է ու ես էլ անընդհատ մի տեսակ հոգնած եմ:

Հետո մտքովս անցավ որ երկար ու դժվար բառերի փոխարեն կարելի է մենակ հեշտ ու կարճ բառեր օգտագործել: Համ էլ ժամանակ եմ խնայում: Մոտաորապես շաբաթը մի անգամ ծաղիկներ եմ դնում Էլջերնոնի գերեզմանին: Միսիս Ֆլինը կարծում է որ ես գժվել եմ որ

ծաղիկներ եմ դնում մկան գերեզմանին բայց ես ասացի որ Էլջերնոնը հատուկ մկնիկ էր:

Հուլիսի 14 - Էլի կիրակի է: Ես ոչմի անելու բան չունեմ որովհետև հեռուստացույցս փչացել է իսկ ես փող չունեմ որ սարքել տամ: (Ոնցոր թե լաբատորիայի այս ամսվա չեկը կորցրելեմ: Չգիտեմ չեմ հիշում):

Գլուխս անընթատ ահավոր ցավում է ու ասպերինն էլ համարյա չի օգնում: Միսիս Ֆլինը տեսնում է որ ես լուրջ հիվանդեմ ու ինձ լիքը խղճում է: Ինքը շատ բարի կին է երբ ինչոր մեկը հիվանդ է:

Հուլիսի 22 - Միսիս Ֆլինը ինչոր տարորինակ բժիշկ էր կանչել որ ինձ նայի: Վախենում էր որ կարող է հանկարծ մեռնեմ: Ես բժիշկին ասեցի որ այնքան էլ հիվանդ չեմ ուղղակի մեկ-մեկ ամեն ինչ մոռանում եմ: Հարցրեց ընկերներ կամ հարազատներ ունեմ ու ես ասեցի չէ ոչ

ընկերներ ունեմ ոչ էլ հարազատներ: Պատմեցի որ մենակ մի ժամանակ մի ընկեր ունեի անունը Էլջերնոն էր բայց ինքը մուկ էր ու մենք միշտ իրար հետ մրցում էինք: Ինքը մի տեսակ տարորինակ նայեց վրաս ու երեվի մտածեց գժվել եմ:

Հետո երբ ասեցի որ առաչ ես հանձար էի ժպտաց ու սկսեց հետս այնպես խոսել ոնցոր երեխա լինեի ու միսիս Ֆլիննին աչքով արեց: Ես կատաղեցի ու դրան վռնդեցի դուրս որովհետեվ ինքն էլ էր ինձ ձեռ առնում ոնցոր մի ժամանակ բոլորը:

Հուլիսի 24 - Փողերս լրիվ պրծելեն ու միսիս Ֆլիննը ասում է որ պիտի գնամ մի տեղ աշխատեմ որ կարողանամ սենյակիս վարցը տամ թե չէ արթեն երկու ամիս է փող չեմ տվել: Ես ոչմի գործ անել չգիտեմ բացի այն գործից որ անում էի Դոննեգանի պլաստիկ տուփերի գործարանում: Ես չեմ ուզում հետ գնալ այնտեղ որովհետեվ իրենք բոլորը գիտեին ինձ երբ ես խելացի էի ու հիմա երեվի կսկսեն

վրաս ծիծաղել: Բայց համել չգիտեմ ուրիշ ինչ անեմ որ փող ճարեմ:

Հուլիսի 25 - Իմ առաչվա հաշվետվությունները էի նայում ու շատ տարորինակ է բայց չեմ կարողանում կարթալ իմ գրածներս: Հազիվ կարողանումեմ մի քանի բառեր տարբերել բայց իմաստը չեմ հասկանում:

Միսս Կինիանն էր եկել կանգնել դռան մոտ բայց ես ասեցի գնացեք չեմ ուզում ձեզ տեսնել: Ինքը լաց եղավ ու ես էլ լաց եղա բայց ներս չթողեցի որովհետեվ չեմ ուզում որ ինքն էլ ծիծաղի իմ վրա: Ասեցի որ ինքը էլ իմ դուրը չի գալիս: Ասեցի որ էլ չեմ ուզում խելացի լինել: Բայց դա ճիշտ չի: Ես դեռ սիրումեմ իրեն ու դեռ ուզումեմ խելացի լինել բայց ստիպված պիտի այդպես ասեի որ գնար: Ինքը միսիս Ֆլիննին իմ սենյակի համար փող տվեց: Բայց ես չեմ ուզում որ տա: Պիտի գործ գտնեմ:

Խնդրումեմ... Խնդրումեմ ինչ կլինի թող գոնե գրելն ու կարթալը չմոռանամ:

Հուլիսի 27 - Միստր Դոննեգանը շատ բարի էր երբ հետ գնացի մոտը ու խնդրեցի որ թողնի նորից հավաքարար աշխատեմ: Սկզբից մի տեսակ կասկածելով էր նայում բայց հետո երբ պատմեցի թե հետս ինչ է եղել ինքը շատ տխրեց ձեռքը դրեց ուսիս ու ասեց Չարլի Գորդոն դու իսկական տղամարդ ես:

Բոլորը ինձ էին նայում երբ իջա ներքեվ ու սկսեցի առաչվա նման զուգարանը մաքրել: Ես ինձ ասեցի Չարլի եթե հանկարծ էլի սկսեն քեզ ձեռ առնել բանի տեղ մի դիր որովհետեվ դու հիշումես որ իրենք այնքան էլ խելացի չեն ինչքան մի ժամանակ քեզ թվում էր: Ու համել իրենք մի ժամանակ քո ընկերներն էին ու եթե ծիծաղում էլ էին վրադ դա ոչմի կապ չունի որովհետեվ համել սիրում էին քեզ:

Նոր աշխատողներից մեկը ով իմ գնալուց հետո էր գործի ընթունվել մի հատ չար կատակ արեց: Ասեց Չարլի լսելեմ դու ահավոր խելոք դեմք ես համարյա իսկական ակադեմքոս:

Հլը մի հատ խելոք բան ասա: Ես ինձ վատ զգացի բայց Ջո Կարպը եկավ մոտիկ օձի-քից բռնեց ու ասեց Չարլիին հանգիստ թող թե չէ վիզդ կպոկեմ հոտած ծաղրածուի մե-կը: Ես չեի սպասում որ Ջոն իմ կողմից կլինի դրա համար էլ կարծումեմ ինքը իմ իսկական ընկերն է:

Ավելի ուշ Ֆրենկ Ռեյլին էլ եկավ մոտս ու ասեց Չարլի եթե ինչոր մեկը էլի քեզ կպնի կամ փորցի ճնշել ինձ կամ Ջոին ասա ու մենք դրանց հարցերը կլուծենք: Ես ասեցի շնորհակալուցյուն Ֆրենկի ու հետո այնպես հուզվեցի որ ստիպ-ված գնացի պահեստ որ հանկարծ չտեսնի թե ոնցեմ աչքերս լցրել: Ինչ լավ բան է ընկերներ ունենալը:

Հուլիսի 28 - Այսոր իսկական ապուշուցյուն արեցի որովհետեվ լրիվ մոռացել էի որ էլ չեմ գնում հետամնաց չափահասների համար միսս Կինիանի դասարան ոնցոր առաչ: Մտա ներս ու գնացի նստեցի սենյակի խորքի իմ հին

տեղը ու ինքը մի տեսակ տարորինակ նայեց վրաս ու ասեց Չարլզ: Ես չեի հիշում որ ինքը ինձ կյանքում Չարլզ ասած լիներ առաչ միշտ Չարլի էր ասում ու ես ասեցի բարեվ ձեզ միսս Կինիան ես իմ այսորվա բոլոր դասերս արելեմ ուղակի դասագիրքս եմ ինչոր տեղ կորցրել: Ինքը սկսեց լացել ու սենյակից վազեց դուրս ու բոլորը նայեցին ինձ ու ես տեսա որ իրենք լրիվ ուրիշ մարդիկ էին ոչթե իմ հին դասարանցիները:

Հետո մեկել հանկարծ ինչոր բաներ հիշեցի վիրահատուցյանս մասին ու համել թե ոնց էի խելոքացել ու ասեցի վայքու էս անքամ իսկականից ինձ լրիվ Չարլի Գորդոնի տեղը դրեցի: Հետո շուտ դուրս եկա քանի դեռ ինքը դասարան չեր վերադարցել:

Դրա համար էլ որոշելեմ Նյու Յորքից ընդմիշտ հեռանալ: Չեմ ուզում որ հանկարծ մի անգամ էլ ինչոր նման բան լինի: Չեմ ուզում միսս Կինիանը խղճա ինձ: Գործարանում էլ են բոլորը ինձ խղճում ու ես դա էլ չեմ ուզում ու դրա համար էլ մի այնպիսի տեղ եմ գնալու

որտեղ ոչմեկ չգիտի որ Չարլի Գորդոնը մի ժամանակ հանճար է եղել իսկ հիմա նույնիսկ գիրք կարթալ կամ ճիշտ գրել չի կարողանում:

Հետս մի երկու գիրք եմ վերցնում ու չնայած դրանք կարթալ չեմ կարող լիքը կպարապեմ ու երեվի ամեն ինչ չմոռանամ ինչ սովորել էի: Եթե շատ շատ աշխատեմ երեվի նույնիսկ մի քիչ ավելի խելացի դառնամ քան վիրահատությունից առաջ էի: Նապաստակի ոտքը մոտս է ու բախտավոր պեննին էլ ու երեվի դրանք ինձ կոգնեն:

Միսս Կինիան եթե հանկարծ մի օր կարթաք գրածս խնդրումեմ չխղճաք ինձ ես ուրախեմ որ խելացի լինելու երկրորդ շանս ունեցա որովհետեվ լիքը նոր բաներ սովորեցի որ առաչ նույնիսկ չգիտեի էլ որ աշխարում գոյուցյուն ունեն ու շատ շնորակալեմ որ թեկուզ մի պահ կարողացա այդ ամենը տեսել: Չգիտեմ թե ինչու եմ էլի հիմար դարցել կամ թե ինչն եմ սխալ արել երեվի քիչ էի աշխատում իմ վրա դրանից է: Բայց եթե փորցեմ ավելի շատ աշխատել ու լիքը պարապեմ գուցե մի

քիչ ավելի խելացի կդառնամ ու գոնե կհասկանամ թե բոլոր բառերը ինչ են նշանակում: Հիմա մի քիչ հիշումեմ թե ինձ ինչքան լավ էի զգում երբ կարթում էի ճղած անկյունով կապույտ գիրքը: Հենց դրա համար էլ անպայման շարունակելու եմ պարապել ու փորցելու եմ խելոքանալ որ կարողանամ ինձ էլի այդպես լավ զգալ: Շատ հաճելի է երբ լիքը բան գիտես ու խելացի ես: Այնքան կուզեի հենց հիմա խելացի լինեի եթե այդպես լիներ կնստեի ու անընթատ գիրք կկարթայի: Բայց դե ամեն դեպքում ես հաստատ գիտեմ որ աշխարում առաչին հիմար մարդն եմ ով ինչոր կարեվոր բան է արել գիտուցյան համար: Հիմա չեմ հիշում ինչ բայց հիշումեմ որ մի բան հաստատ արելեմ: Ու ինձ թվում է դա նույնն է ոնցոր եթե դա բոլոր իմ նման հիմար մարդկանց անունից արած լինեմ:

Մնաք բարով միսս Կինիան ու դոկտոր Շտրաուս ու մնացած բոլորդ: Ու Հ.Գ. խնդրում եմ ասեք դոկտոր Նեմուրին որ եթե ինքը այդքան շատ չջղայնանա երբ մարդիկ իր վրա

ծիծաղում են ինքը ավելի շատ ընկերներ կունենա: Շատ հեշտ է ընկերներ ունենալը երբ թողնում ես որ մարդիկ քո վրա ծիծաղեն: Այնտեղ ուր գնումեմ ես լիքը ընկերներ եմ ունենալու:

Հ.Հ.Գ. Խնդրումեմ եթե հարմար լինի մեկ-մեկ մի քիչ ծաղիկներ դրեք պարտեզում Էլջերնոնի գերեզմանին...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

հաշվետվություն 1 – մարտի 5, 1965 3
հաշվետվություն 2 - մարտի 6.....4
հաշվետվություն 3 – մարտի 7.....8
հաշվետվություն 4 – մարտի 8.....12
հաշվետվություն 5 – մարտի 10 16
Հաշվետվություն 6 – մարտի 15.....18
Հաշվետվություն 7 - մարտի 19.....20
Հաշվետվություն 8 – մարտի 23 21
Հաշվետվություն 9 27
Հաշվետվություն 10.....35
Հաշվետվություն 11.....42
Հաշվետվություն 12.....55
Հաշվետվություն 13.....70

ԴԵՆԻԵԼ ՔԻԶ

ԾԱՂԻԿՆԵՐ ԷԼՋԵՐՆՈՆԻ ՀԱՄԱՐ

DANIEL KEYES

FLOWERS FOR ALGERNON

Թարգմանիչ՝ Հայկ Ֆելեքյան

Հրատ. խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան
Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Էջադրող՝ Կարինե Սարգսյան
Շապիկը՝ Սարգիս Անտոնյանի
Կազմի ձևավորումը՝ Սոֆյա Թադևոսյանի

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59
Հեռ. / ֆաքս՝ (+374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am